

15
ՀՈՒՆԻՍԻ
2020



ՀՀ ՄՏՎԵՐԱՅԻՆ
ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՀԱՐԿԱՅԻՆ
ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

ՀՀ ՍՏՎԵՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	1
1. ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ԲԵՌԸ ՀՀ-ՈՒՄ	3
1.1. Տնտեսության հարկային բեռը հարկեր/ՀՆԱ հարաբերակցության, ԱԱՀ-ի և շահութահարկի տեսանկյունից	4
1.2. Աշխատուժի հարկային բեռը	8
1.3. Հարկային եկամուտների կառուցվածքը	13
1.4. Հարկային վարչարարությունը	16
1.5. Եզրահանգումներ	19
2. ՍՏՎԵՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ	21
2.1. Որոշ մաթեմատիկական նշանակումներ	22
2.2. Կանխիկի պահանջարկի մեթոդի հիմունքները	22
2.3. Տվյալների նկարագրությունը	24
2.4. Մոդելի կառուցումը	25
2.5. Արդյունքները	32
2.6. Եզրահանգումներ	34
3. ՍՏՎԵՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՖՈՐՄԱԼԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ	36
3.1. Հարկային կանոնների վերանայում	38
3.2. Հարկային վարչարարության մոդելի փոփոխություն	40
3.3. Կանխիկ գործարքների սահմանափակումներ	42
3.4. Եզրահանգումներ	46
ԱՄՓՈՓՈՒՄ	48

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ստվերային տնտեսությունը ուղեկցել է Հայաստանի տնտեսական զարգացմանը անկախության առաջին տարիներից ի վեր: Ավելին, այդ «ժառանգությունը» Հայաստանի երրորդ Հանրապետությունը ստացել է Խորհրդային Միությունից: Սակայն սոցիալիստականից շուկայականի անցման ժամանակաշրջանը Հայաստանում նշանավորվել է մի շարք նոր տնտեսական անորոշությունների առաջացմամբ, որոնք «պարարտ հող» ստեղծեցին ստվերային շրջանառության ծավալների հետագա ընդլայնման համար:

Իսկապես, Խորհրդային Միությունում ստվերային տնտեսության ծավալները բավական կայուն էին, քանի որ սոցիալիստական համակարգի տնտեսական կանոնները՝ գրված և չգրված, օրինական և ապօրինի, բազում թերություններով հանդերձ, կայուն էին և կանխատեսելի¹: Սակայն անկախության առաջին տարիներին շուկաների հախուռն ազատականացումը տնտեսավարողների համար ստեղծեց բազում անորոշություններ՝ խաթարելով տնտեսական զարգացումների դիրքը: Սրան գումարվեց նաև կոշտ հարկային քաղաքականությունը, որը ուղղակիորեն դրդում էր բիզնեսներին տեղափոխվել ստվերային դաշտ՝ հարկերից խուսափելու նպատակով:

Այսպիսով, ՀՀ ստվերային տնտեսության՝ 90-ական թվականների դինամիկան բացատրվում է անցումային գործընթացների կառավարման բնագավառում արձանագրված թերացումներով: Իսկ ինչպիսի՞ միտումներով է բնորոշվել ՀՀ ստվերային տնտեսության դինամիկան 2000-ական թվականներին: Սույն վերլուծությունում փորձ է արվել գնահատելու այս միտումները պաշտոնապես հասանելի տվյալների «երկայնքով», այն է՝ 2001-ի առաջին եռամսյակից մինչև 2019-ի երրորդ եռամսյակը:

Չնայած արդեն երկար տարիներ միջազգային հետազոտական ինստիտուտները զբաղվում են ստվերային տնտեսության հիմնախնդրով, սակայն այս հասկացության վերաբերյալ գոյություն չունի միասնական սահմանում: Սույն վերլուծությունը հետևում է գերմանացի տնտեսագետ Ֆ. Շնայդերի աշխատանքներում ձևակերպված հետևյալ սահմանմանը². ստվերային տնտեսությունը ներառում է եկամուտ գեներացնող բոլոր այն գործառնությունները, որոնք, լինելով չգրանցված, չեն վերահսկվում պետական

¹ Վ. Հարությունյան, Հայաստանի Հանրապետության ստվերային տնտեսության պատճառների վերլուծություն, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 2019, էջ 56-65:

² Օրինակ՝ F. Schneider, A. Buehn, Estimating the size of the shadow economy: methods, problems and open questions, IZA discussion paper No. 9820, 2016, էջ 1-4:

մարմինների կողմից, բայց հաշվառվելու պարագայում կարող են ունենալ դրական ազդեցություն ֆորմալ ՀՆԱ-ի վրա:

Սույն վերլուծությունում ստվերային տնտեսության գնահատման խնդիրը դիտարկվել է հարկային համակարգի համատեքստում: Խնդիրն այն է, որ ինչպես տեսական, այնպես էլ էմպիրիկ հետազոտությունները ցույց են տալիս, որ տնտեսության հարկային բեռը այն առանցքային գործոնն է, որի օգնությամբ հնարավոր է բացատրել ոչ ֆորմալ դաշտում տեղի ունեցող զարգացումները: Բացի այդ, ի տարբերություն այլ գործոնների՝ այն չափելի է և՛ որակապես, և՛ քանակապես, ուստի կարող է հիմք հասնդիսանալ ինչպես նորմատիվային դատողությունների, այնպես էլ թվային գնահատականների համար: Ուշագրավ է նաև, որ հարկային համակարգը ստվերային գործընթացների համատեքստում ոչ միային պատճառ է, այլև հետևանք, քանի որ չգրանցված գործունեության արդյունքը պետության հարկային եկամուտների կորուստն է:

Վերլուծությունը կազմված է երեք բաժիններից: 1-ին բաժնում ներկայացվել են ՀՀ ստվերային տնտեսության նախադրյալները, այն է՝ տնտեսության հարկային բեռի առանձնահատկությունները: Մասնավորապես, դիտարկելով ԱԱՀ-ի և շահութահարկի դրույքաչափերի և հարաբերական ծավալների անհամապատասխանությունը՝ ցույց է տրվել, որ հարկային համակարգում առկա են «ճեղքվածքներ»: Եկամտային հարկի մասով հաշվարկվել է հարկային սեպի ցուցանիշը, որը հավաստել է, որ աշխատուժի հարկային բեռը պրոգրեսիվ չէ: Հարկային եկամուտների կառուցվածքի տեսանկյունից հիմնավորվել է, որ ուղղակի և անուղղակի հարկերի հարաբերակցությունը ՀՀ-ում ունի չեզոք ազդեցություն ստվերային տնտեսության վրա: Վերջապես, ցույց է տրվել, որ առկա խնդիրների մի մասը պայմանավորված է հարկային վարչարարության ցածր որակով, որը կարիք ունի և՛ ֆունկցիոնալ, և՛ ռազմավարական բնույթի բարելավումների:

2-րդ բաժնում կառուցվել է տնտեսաչափական մոդել՝ միտված ՀՀ ստվերային տնտեսության գնահատմանը: Մոդելի առանցքային բացատրող փոփոխականը տնտեսության հարկային բեռի հիմնական ցուցանիշն է, այն է՝ հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը: Մոդելի հիմքում կանխիկի պահանջարկի մեթոդն է, որը ստվերային շրջանառությունը կապակցում է տնտեսությունում առկա ավելցուկային կանխիկի հետ: Հաշվարկների արդյունքում պարզվել է, որ ՀՀ ստվերային տնտեսությունը կազմում է ֆորմալ ՀՆԱ-ի 27-28%-ը: Ընդ որում, պիկը արձանագրվել է 2004-ի առաջին եռամսյակում, երբ ստվերայնության մակարդակը գնահատվել է

62%-ի շրջակայքում: Դրանից հետո արձանագրվել է ոչ ֆորմալ գործունեության կրճատման միտում՝ սկզբում բարձր տեմպերով, իսկ վերջին տարիներին՝ ավելի ցածր:

3-րդ բաժնում ներկայացվել են ստվերային տնտեսության ֆորմալացման ուղիները ՀՀ-ում: Առանձնացվել է բարեփոխումների երեք ուղղություն՝ հարկային կանոնների վերանայում, հարկային վարչարարության մոդելի փոփոխություն և կանխիկ գործարքների սահմանափակումներ: Առաջին ուղղությունը ենթադրում է հարկային կանոններում պրոգրեսիվության տարրերի ներմուծում, երկրորդը՝ հարկային վարչարարության մոդելի ռազմավարության արդիականացում, երրորդը՝ անկանխիկ վճարումների խրախուսում: Գործողությունների այս շղթայի նպատակը ստվերում գործող տնտեսավարողներին «սպիտակ դաշտ» տեղափոխելն է, որը կապահովի ՀՆԱ-ի և պետության հարկային եկամուտների ավելացում՝ հիմքեր ստեղծելով բնակչության կենսամակարդակի բարձրացման համար:

Վերլուծությունը ավարտվել է հիմնական արդյունքների և հետևությունների ամփոփմամբ:

1. ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ԲԵՌԸ ՀՀ-ՈՒՄ³

Այն վարկածը, որ անարդյունավետ հարկային համակարգը կարող է պատճառ լինել ստվերային տնտեսության առաջացման և ընդլայնման համար, տնտեսագետների և քաղաքական գործիչների կողմից շրջանառվում է վաղուց: Առաջին համապարփակ մաթեմատիկական հիմնավորումը, սակայն, առաջ է քաշվել միայն 1972 թվականին Ալլինգհամի և Սանդմոյի կողմից⁴: Նրանք ցույց են տվել, որ ստվերի ձևավորումը կապված է հետևյալ չորս գործոնների հետ. հարկային ստուգումների հավանականությունը (հաճախականությունը), ստուգումների արդյունքում բացահայտված խախտումներից բխող տույժերի և տուգանքների մեծությունը, հարկադրույթները և հարկատուի վարքագծի՝ ռիսկից խուսափման մակարդակը: Հատկանշական է, որ այս չորս հայտանիշներից միայն երեքը վերաբերում են հարկային համակարգին: Ընդ որում, առաջին երկուսը ներկայացնում են հարկային վարչարարությունը, իսկ երրորդը՝ հարկային քաղաքականությունը:

³ Սույն վերլուծության հիմքում 2018 թվականն է և դրան նախորդող ժամանակաշրջանը, քանի որ համեմատվող երկրների մեծ մասի դեպքում չկան ավելի թարմ տվյալներ (առնվազն դրանք հասանելի չեն): Այս է պատճառը, որ ՀՀ պարագայում համադրելիության պահպանման նպատակով դիտարկվում են հարկային օրենսդրության այն կանոնները, որոնք գործել են 2018-ի դրությամբ:

⁴ M. Allingham, A. Sandmo, Income tax evasion: a theoretical analysis, Journal of Public Economics, Vol. 1, No. 3-4, 1972, էջ 323-338:

Հաշվի առնելով վերոհիշյալը՝ 1-ին բաժինը միտված է գնահատելու հարկային համակարգի հիմնական պարամետրերի դերը ՀՀ-ում ստվերային շրջանառության ձևավորման տեսանկյունից: Այս իմաստով էական նշանակություն ունեն հետևյալ չորս հարցադրումները՝

- ա) արդյո՞ք տնտեսության հարկային բեռը համարժեք է նրա պոտենցիալ հարկունակությանը,
- բ) արդյո՞ք աշխատուժի հարկումը բավարար պրոգրեսիվ է,
- գ) արդյո՞ք հարկային եկամուտների կառուցվածքը և դրա հիմքում դրված կանոնները կանխում են ստվերային շրջանառության ձևավորումը,
- դ) արդյո՞ք հարկային վարչարությունը նպաստում է ստվերային շրջանառության ֆորմալացմանը:

1-ին բաժինը կառուցվել է հետևյալ տրամաբանությամբ. 1.1-1.4-րդ ենթաբաժիններում հերթականությամբ ուսումնասիրվել են «ա»-«դ» հարցադրումները: Մասնավորապես, 1.1-ին ենթաբաժնում դիտարկվել են հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը, ինչպես նաև ԱԱՀ-ի և շահութահարկի բնութագրիչները՝ ՀՀ-ն համեմատելով Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի մի շարք երկրների հետ: 1.2-րդ ենթաբաժնում գնահատվել է եկամտային հարկի պրոգրեսիվությունը ՀՀ-ում՝ կիրառելով հարկային սեպի ցուցիչը: 1.3-րդ ենթաբաժնում դիտարկվել է ՀՀ-ում ուղղակի և անուղղակի հարկերի հարաբերակցությունը՝ գնահատելու հարկային բեռի բաշխումը և դրա ազդեցությունը ստվերային տնտեսության վրա: 1.4-րդ ենթաբաժնում ձևակերպվել և հիմնավորվել է ՀՀ-ում հարկային վարչարարության բարեփոխման հրամայականը: Վերջապես, 1.5-րդ ենթաբաժնում ամփոփվել են նախորդ 4 ենթաբաժինների հիմնական արդյունքները, և կատարվել են եզրահանգումներ «ա»-«դ» հարցադրումների առնչությամբ:

1.1. Տնտեսության հարկային բեռը հարկեր/ՀՆԱ հարաբերակցության, ԱԱՀ-ի և շահութահարկի տեսանկյունից

Տնտեսության հարկային բեռի առաջնային ցուցիչը *հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունն* է, որը *հարկային եկամուտների* նման հաշվարկվում է *զուտ* (առանց սոցիալական վճարների) կամ *համախառն* (սոցիալական վճարների ներառմամբ) արտահայտությամբ:

**Աղյուսակ 1.1. Հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը
ՀՀ-ում և նրան համադրելի մի շարք երկրներում 2018թ.⁵**

Երկիր	Հարկեր (տոկոս ՀՆԱ-ում)	Սոցիալական վճարներ (տոկոս ՀՆԱ-ում)	Ընդամենը
Ադրբեջան	13.13	2.92	16.05
Բելառուս	25.22	10.62	35.84
Էստոնիա	21.15	11.69	32.84
Թուրքիա	18.24	7.70	25.94
Լատվիա	21.40	9.37	30.77
Լեհաստան	21.93	13.99	35.92
Լիտվա	17.26	13.04	30.30
Հայաստան	21.07	0.00	21.07
Հունգարիա	25.47	12.48	37.95
Ղազախստան	15.70	0.56	16.26
Ղրղզստան	20.68	5.50	26.18
Չեխիա	20.37	15.65	36.02
Ռուսաստան	20.51	7.23	27.74
Սլովակիա	19.08	14.89	33.98
Սլովենիա	22.00	15.75	37.75
Վրաստան	25.40	0.00	25.40

Աղյուսակ 1.1-ը վկայում է, որ Հայաստանում համախառն հարկային բեռը համեմատաբար թեթև է: Իսկապես, Հայաստանը այդ ցուցանիշով իր անմիջական հարևաններից⁶ գերազանցում է միայն Ադրբեջանին: Վերջինս, սակայն, ունի մեկ էական առանձնահատկություն: Ադրբեջանում համախառն հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը ցածր է, որովհետև ի տարբերություն դիտարկվող մյուս երկրների՝ պետական բյուջեի գերակշիռ մասը ձևավորվում է ոչ թե հարկային եկամուտների և սոցիալական վճարների, այլ այսպես կոչված *գույքային եկամուտների (property income)*⁷ հաշվին: Իսկապես, ըստ Արժույթի միջազգային հիմնադրամի տվյալների⁸ Ադրբեջանում համախառն հարկերը կազմում են պետական բյուջեի

⁵ Տվյալների աղբյուրը՝ International Monetary Fund, Government Finance Statistics, <https://data.imf.org/?sk=a0867067-d23c-4ebc-ad23-d3b015045405&slid=1544448210372> (այցելվել է 09.03.2020թ.):

⁶ Հայաստանի հարևաններից Իրանը ներառված չէ այս համեմատություններում, քանի որ նրա հարկային համակարգը համադրելի չէ մյուս երկրների հետ:

⁷ Ադրբեջանում գույքային եկամուտները գեներացվում են հիմնականում նավթագազային ոլորտի պետական ձեռնարկությունների կողմից:

⁸ International Monetary Fund, Government Finance Statistics, նույն տեղում:

Եկամուտների ընդամենը 40.26%-ը այն դեպքում, երբ գույքային եկամուտների տեսակարար կշիռը հասնում է 56.05%-ի: Ինչ վերաբերում է ԵԱՏՄ անդամ երկրներին, ապա նրանցից Հայաստանին զիջում է միայն Ղազախստանը:

Աղյուսակ 1.1-ը նաև ցույց է տալիս, որ զուտ հարկեր/ՀՆԱ հարաբերակցությամբ Հայաստանը համադրելի է Արևելյան Եվրոպայի երկրների հետ: Սակայն այդ երկրներում անհամեմատ բարձր են նաև սոցիալական վճարները, ինչի պատճառով նրանց համախառն հարկային բեռը գերազանցում է Հայաստանի ցուցանիշը 1.5-1.8 անգամ:

Տնտեսության հարկային բեռի մասին առավել համակողմանի գնահատական ստանալու համար անհրաժեշտ է դիտարկել նաև առանձին հարկատեսակները: Հակիրճ ներկայացնենք ԱԱՀ-ի և շահութահարկի բնութագրիչները: Եկամտային հարկը կդիտարկվի առանձին՝ 1.2-րդ ենթաբաժնում: Իսկ 1.3-րդ ենթաբաժնում անդրադարձ կկատարվի հարկային եկամուտների կառուցվածքին, ինչպես նաև ուղղակի և անուղղակի հարկերի հարաբերակցության դինամիկային:

**Աղյուսակ 1.2. ԱԱՀ-ի և շահութահարկի բնութագրիչները
ՀՀ-ում և նրան համադրելի մի շարք երկրներում 2018թ.⁹**

Երկիր	ԱԱՀ		Շահութահարկ	
	դրույքաչափ	տոկոս ՀՆԱ-ում	դրույքաչափ	տոկոս ՀՆԱ-ում
Ադրբեջան	18	5.98	20	3.14
Բելառուս	20	9.36	18	2.94
Էստոնիա	20	8.95	20	1.99
Թուրքիա	18	4.85	22	2.21
Լատվիա	21	9.28	20	1.04
Լեհաստան	23	8.27	19	2.10
Լիտվա	21	7.87	15	1.53
Հայաստան	20	7.20	20	2.80
Հունգարիա	27	12.36	9	1.36
Ղազախստան	12	3.41	20	5.26
Ղրղզստան	12	10.24	10	2.73
Չեխիա	21	7.94	19	3.50
Ռուսաստան	18	5.93	20	3.99
Սլովակիա	20	7.01	21	3.25
Սլովենիա	22	8.31	19	1.94
Վրաստան	18	10.70	15	1.78

Աղյուսակ 1.2-ը ցույց է տալիս, որ Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրներում ԱԱՀ-ի դրույքաչափը տատանվում է հիմնականում 18-22% միջակայքում: Հետևաբար, Հայաստանի ցուցանիշը կարելի է համարել միջին: Այստեղ ուշադրության է արժանի մեկ այլ հանգամանք: Թեև Հայաստանը ԱԱՀ դրույքաչափով 2 տոկոսային կետով առաջ է Վրաստանից¹⁰, այն 3.50 տոկոսային կետով զիջում է նրան ՀՆԱ-ում այս հարկատեսակի մասնաբաժնով: Այս փաստը կարող է ունենալ տարբեր բացատրություններ (տնտեսության կառուցվածք, ԱԱՀ վճարող սուբյեկտների քանակ և այլն), որոնցից ամենահավանականը, թերևս, կապված է ստվերային տնտեսության գործոնի հետ: Իսկապես, գոյություն ունի էմպիրիկ օրինաչափություն, ըստ որի այն երկիրը, որտեղ ԱԱՀ դրույքաչափը ավելի մեծ է, այլ հավասար պայմաններում

⁹ Տվյալների աղբյուրները՝

ա) Consumption Tax Trends 2018, VAT/GST and Excise Rates, Trends and Policy Issues, OECD Publishing, 2018, էջ 66-67, https://read.oecd-ilibrary.org/taxation/consumption-tax-trends-2018_ctt-2018-en#page68 (այցելվել է 09.03.2020թ.):

բ) Tax Rates Online, KPMG, <https://home.kpmg/xx/en/home/services/tax/tax-tools-and-resources/tax-rates-online.html> (այցելվել է 09.03.2020թ.):

գ) International Monetary Fund, Government Finance Statistics, նույն տեղում:

¹⁰ Նկատենք, որ Հայաստանի ԱԱՀ դրույքաչափը ամենաբարձրն է տարածաշրջանում:

ունենում է ավելի բարձր ԱԱՀ/ՀՆԱ հարաբերակցություն: Հայաստանի և Վրաստանի տնտեսությունների պարագայում այս օրինաչափությունը չի գործում, ինչը, ի թիվս այլ գործոնների, կապված է Հայաստանում *ԱԱՀ ճեղքվածի (VAT gap)*¹¹ առկայության հետ, որը ստվերային տնտեսության դրսևորումներից է:

Անցնելով շահութահարկի վերլուծությանը՝ նկատենք, որ ըստ Աղյուսակ 1.2-ի տվյալների՝ ՀՀ-ում շահութահարկի բեռը ևս չափավոր է¹²: Հայաստանին համադրելի որոշ երկրներում, օրինակ՝ Լիտվայում և Վրաստանում, հարկադրույքը անհամեմատ ավելի ցածր է և կազմում է 15%: Մյուս կողմից, ավելի բարձր հարկադրույքով առանձնանում են Սլովակիան և Թուրքիան՝ համապատասխանաբար 21% և 22%: Նկատենք, որ ստվերային տնտեսության գործոնը որոշ չափով առկա է նաև շահութահարկի տվյալներում: Այսպես, 2018-ի տվյալներով Հայաստանը Ղազախստանի պես «հարկում է» տնտեսությունում գեներացված շահույթի մեկ հինգերորդը, սակայն շահութահարկ-ՀՆԱ հարաբերակցությամբ զիջում է նրան 2.46 տոկոսային կետով: Սա նշանակում է, որ Հայաստանի հարկային համակարգը բնորոշվում է նաև *շահութահարկի ճեղքվածքով (CIT gap)*:

1.2. Աշխատուժի հարկային բեռը

Աշխատուժի հարկային բեռի, ինչպես նաև եկամտային հարկի պրոգրեսիվության լավագույն ցուցիչը *հարկային սեպն է (tax wedge, налоговый клин)*: Այն կանոնավոր կերպով հաշվարկվում է Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ-ի)¹³ կողմից իր անդամ երկրների համար¹⁴: Ընդհանուր դեպքում ցուցանիշը սահմանվում է հետևյալ կերպ. տվյալ եկամուտը (որպես կանոն միջին աշխատավարձի 67%-ը, 100%-ը, 167%-ը) ստացող աշխատողի բոլոր հարկային վճարումները՝ հարաբերած գործատուի կատարած ընդհանուր աշխատանքային

¹¹ ԱԱՀ ճեղքվածքը ներկայացնում է փաստացի հավաքագրված ԱԱՀ-ի շեղումը այն մեծությունից, որը համապատասխանում է տվյալ տնտեսության իրական հարկունակությանը, ինչպես նաև սահմանված հարկային կանոնների պատշաճ կիրարկմանը: Այս ձևով սահմանվում է նաև շահութահարկի ճեղքվածքը:

¹² Հարկ է նկատել, որ 2020-ի հունվարի 1-ից ուժի մեջ մտած նոր հարկային կանոններով շահութահարկի դրույքաչափը 20%-ից իջեցվել է 18%-ի:

¹³ Միջազգային անվանումը՝ Organization for Economic Cooperation and Development (OECD):

¹⁴ Տե՛ս օրինակ՝ Taxing Wages 2019, OECD Publishing, 2019, https://www.oecd-ilibrary.org/taxation/taxing-wages-2019_tax_wages-2019-en (այցելվել է 09.03.2020թ.):

ծախսումներին: Կոնկրետ հաշվարկը, սակայն, կախված է տվյալ հարկային համակարգի բնութագրերից, հետևաբար տարբերվում է երկրից երկիր¹⁵:

ՀՀ հարկային օրենսդրության՝ 2018-ի դրությամբ գործող կանոնների ներքո հարկային սեպը պետք է հաշվարկվի հետևյալ կերպ¹⁶.

$$w(y) = \begin{cases} \frac{0.23y + 0.025y + 1,000}{y}, & \text{եթե } y \leq 150,000 \\ \frac{34,500 + 0.28(y - 150,000) + 0.025y + 1,000}{y}, & \text{եթե } 150,000 < y \leq 500,000 \\ \frac{34,500 + 0.28(y - 150,000) + 12,500 + 1,000}{y}, & \text{եթե } 500,000 < y \leq 2,000,000 \\ \frac{552,500 + 0.36(y - 2,000,000) + 12,500 + 1,000}{y}, & \text{եթե } y > 2,000,000 \end{cases} =$$

$$= \begin{cases} \frac{0.255y + 1,000}{y}, & \text{եթե } y \leq 150,000 \\ \frac{0.305y - 6,500}{y}, & \text{եթե } 150,000 < y \leq 500,000 \\ \frac{0.28y + 6,000}{y}, & \text{եթե } 500,000 < y \leq 2,000,000 \\ \frac{0.36y - 154,000}{y}, & \text{եթե } y > 2,000,000 \end{cases}$$

որտեղ y -ը աշխատողի ամսական անվանական աշխատավարձն է, իսկ $w(y)$ -ը՝ աշխատավարձի այդ մակարդակին համապատասխանող հարկային սեպը: Վերոհիշյալ համակարգում կարմիրով նշված մեծությունները ներկայացնում են եկամտային հարկը, կապույտով նշվածները՝ պարտադիր կենսաթոշակային վճարը, իսկ կանաչով նշվածները՝ պարտադիր դրոշմանիշային վճարը:

Ընդունված է հարկային սեպը հաշվարկել միջին աշխատավարձի 67%-ի, 100%-ի և 167%-ի նկատմամբ: Ընդ որում, ՏՀԶԿ-ի որդեգրած մեթոդաբանության շրջանակներում միջին աշխատավարձը սահմանվում է որպես NACE Rev. 2

¹⁵ Եվրոպական երկրների մեծ մասում աշխատողը և գործատուն վճարում են պարտադիր սոցիալական վճարներ: Այդ երկրներում որպես կանոն սահմանված են նաև աշխատավարձի (payroll) հարկեր: Սակայն ՀՀ-ում նման հարկատեսակներ չեն կիրառվում:

¹⁶ 2020-ի հունվարի 1-ից ուժի մեջ մտած նոր հարկային կանոններով եկամտային հարկը դարձել է համահարթ՝ 23% դրույքաչափով: Ընդ որում, մինչև 2023թ. ամեն տարի հարկադրույքը նվազելու է 1 տոկոսային կետով՝ 2023-ին հասնելով 20%-ի: Բացի եկամտային հարկից, վարձու աշխատողները պետք է կատարեն վճարումներ պարտադիր կենսաթոշակային (2020թ.՝ 2.5%, 2021թ.՝ 3.5%, 2022թ.՝ 4.5%, 2023թ. և հետո՝ 5%) և դրոշմանիշային (1000 դրամ) հատկացումների գծով:

դասակարգման¹⁷ B-N հոդվածներին համապատասխանող աշխատավարձերի միջին թվաքանակն: 2018-ի տվյալներով այս ցուցանիշը ՀՀ-ում գնահատվում է 200,966.14 դրամ: Հետևաբար միջին աշխատավարձի 67%-ը կլինի 134,647.32 դրամ, իսկ 167%-ը՝ 335,613.46 դրամ:

Աղյուսակ 1.3-ում Հայաստանը ըստ հարկային սեպի համեմատվում է ՏՀԶԿ անդամ որոշ եվրոպական երկրների հետ: Նկատենք, որ ի տարբերություն նախորդ աղյուսակների՝ այս աղյուսակում ներառված չեն ՀՀ հարևան և ԵԱՏՄ անդամ երկրները, քանի որ նրանց պարագայում չկան վստահելի և համադրելի գնահատականներ հարկային սեպի վերաբերյալ:

Աղյուսակ 1.3. Հարկային սեպը ՀՀ-ում և նրան համադրելի մի շարք երկրներում 2018թ.¹⁸

Երկիր	Միջին աշխատավարձի 67%	Միջին աշխատավարձի 100%	Միջին աշխատավարձի 167%
Էստոնիա	32.85	36.47	41.17
Թուրքիա	34.22	38.87	42.46
Լատվիա	38.66	42.31	42.63
Լեհաստան	35.13	35.75	36.26
Լիտվա	37.11	40.63	42.07
Հայաստան	26.24	27.27	28.56
Հունգարիա	45.04	45.04	45.04
Չեխիա	41.36	43.75	45.69
Սլովակիա	39.48	41.74	43.58
Սլովենիա	39.97	43.25	46.71
ՏՀԶԿ միջին	32.13	36.06	40.39

Աղյուսակ 1.3-ի նախնական վերլուծությունը վկայում է, որ ՀՀ-ում աշխատանքային ռեսուրսների հարկային բեռը բավական թեթև է (առնվազն Արևելյան Եվրոպայի երկրների համեմատ): Եթե միջին աշխատավարձից (ավելի

¹⁷ Այս դասակարգիչը օգտագործվում է ԵՄ-ում տնտեսական գործունեության տեսակների դասակարգման նպատակով:

¹⁸ Տվյալների աղբյուրները՝

ա) հեղինակային հաշվարկներ՝ հիմնված ՀՀ վիճակագրական կոմիտեի հետևյալ հրապարակման վրա՝ Աշխատավարձ և աշխատողների թվաքանակ, Աշխատանքի շուկան Հայաստանում, 2019, էջ 152, <https://www.armstat.am/am/?nid=82&id=2226> (այցելվել է 09.03.2020թ.):

բ) OECD Tax Statistics, Taxing Wages: Comparative tables, <https://stats.oecd.org/viewhtml.aspx?datasetcode=AWCOMP&lang=en> (այցելվել է 09.03.2020թ.):

ստույգ՝ միջին աշխատավարձի 100%-ից) վճարվող հարկերը (ներառյալ բոլոր տեսակի պարտադիր վճարները՝ սոցիալական, կենսաթոշակային և այլն) ՀՀ-ում կազմում են 27.27%, ապա ՏՀՀԿ երկրների միջինը 36.06% է: Սակայն այս համատեքստում անհրաժեշտ է կատարել երեք կարևոր վերապահում:

Առաջին՝ ՀՀ-ում *ցածր վարձատրվող* աշխատուժի հարկումը ռեգրեսիվ է հետևյալ իմաստով. հարկային «սեպը» նվազող է՝ ըստ անվանական աշխատավարձի: Մաթեմատիկորեն՝ ասվածը բխում է նրանից, որ $w(y)$ -ի առաջին հավասարումը նվազող է ըստ y -ի, այսինքն՝ $\frac{\partial w}{\partial y} < 0$, երբ $y \leq 150,000$: Իսկապես, տոկոսային արտահայտությամբ 150,000 դրամ աշխատավարձ ստացողը վճարում է ավելի քիչ հարկ (39,250 դրամ՝ 26.17%), քան, օրինակ, 120,000 դրամ ստացողը (31,600 դրամ՝ 26.33%):

Երկրորդ՝ աշխատուժի հարկումը ռեգրեսիվ է նաև 500,000-2,000,000 դրամ միջակայքում¹⁹: Մաթեմատիկորեն՝ $w(y)$ -ի երրորդ հավասարումը նույնպես նվազող է ըստ y -ի, այն է՝ $\frac{\partial w}{\partial y} < 0$, երբ $500,000 < y \leq 2,000,000$: Իրոք, 600,000 դրամ աշխատավարձ ստացողը ընդհանուր առմամբ վճարում է 174,000 դրամ հարկ, որը կազմում է իր եկամտի 29%-ը: Իսկ 1,600,000 դրամ աշխատավարձ ստացողը վճարում է 454,000 դրամ հարկ, որը, սակայն, կազմում է եկամտի 28.38%-ը:

Երրորդ՝ մյուս եկամտային խմբերում հարկման պրոգրեսիվությունը չափազանց թույլ է: Հատկանշական է, որ միջին աշխատավարձի 67%-ի և 100%-ի միջև հարկային «սեպը» աճում է ընդամենը 1.03 տոկոսային կետով: Համեմատության համար նշենք, որ նույն եկամտային միջակայքում ՏՀՀԿ-ի միջինը աճում է 3.93 տոկոսային կետով, այսինքն՝ 3.85 անգամ ավելի արագ: Արևելյան Եվրոպայի մի շարք երկրների հետ համեմատության պարագայում այս հակադրությունը առավել ցայտուն է (կրկին ի վնաս Հայաստանի): Այսպես, հարևան Թուրքիայում աշխատուժի հարկային բեռի տարբերությունը միջին աշխատավարձի 100%-ի և 67%-ի միջև կազմում է 4.64 տոկոսային կետ, որը Հայաստանի ցուցանիշը գերազանցում է արդեն 4.55 անգամ:

Ամփոփելով վերոհիշյալ վերլուծությունը՝ արձանագրենք հիմնական արդյունքները: Եկամտային հարկի դիտարկվող սանդղակը ենթադրում է ամսական անվանական աշխատավարձի 4 միջակայք՝ 0-150,000 դրամ, 150,000-500,000 դրամ, 500,000-2,000,000 դրամ և 2,000,000 դրամից բարձր: Հարկային սեպի հաշվարկը

¹⁹ Աղյուսակ 1.3-ը չի ներառում այս միջակայքը, քանի որ միջին աշխատավարձի 167%-ը-ը փոքր է 500,000 դրամից:

ցույց է տալիս, որ այս միջակայքերից երկուսում՝ առաջինում և երրորդում, հարկումը ռեգրեսիվ է, ինչը նշանակում է, որ անվանական աշխատավարձին աճին զուգահեռ նվազում է դրանում պարտադիր հարկային վճարների (ներառյալ եկամտային հարկը, պարտադիր կենսաթոշակային և դրոշմանիշային վճարները) տեսակարար կշիռը: Մյուս երկու եկամտային խմբերում՝ երկրորդում և չորրորդում, աշխատուժի հարկման պրոգրեսիվությունը չափազանց թույլ է՝ Արևելյան Եվրոպայի մի շարք երկրների համեմատ:

Փորձենք պարզաբանել, թե ինչու է աշխատուժի հարկման ռեգրեսիվությունը անցանկալի, և ինչպես այն կարող է հանգեցնել ստվերի ծավալների աճի: Դիտարկելով եկամուտների բաշխման ստորին շերտերը, այն է՝ 0-150,000 դրամ միջակայքը՝ արձանագրենք հետևյալ օրինաչափությունը. երբ ստվերում աշխատող տնտեսավարողները մուտք են գործում «սպիտակ դաշտ», նրանք իրենց աշխատողների համար գոնե սկզբնական շրջանում սահմանում են ցածր աշխատավարձեր²⁰: Հետևաբար, այն հանգամանքը, որ ցածր աշխատավարձերի տիրույթում հարկային բեռը անհամաչափ է, խոչընդոտում է տնտեսավարողների մուտքը ֆորմալ տնտեսություն: Այլ կերպ ասած՝ եկամտային հարկի ռեգրեսիվությունը, որ դիտվում է ցածր աշխատավարձերի տիրույթում, արգելակում է ստվերի ֆորմալացման գործընթացը:

Միաժամանակ, ռեգրեսիվ հարկային համակարգը հանգեցնում է սոցիալական անհավասարության՝ վտանգելով հասարակական հարաբերությունների բնականոն ընթացքը: Սոցիալական անհավասարությունը ունի նաև տնտեսական հետևանքներ. այն զսպում է ամբողջական պահանջարկը, քանի որ բնակչության ավելի հարուստ շերտերը հակված են սպառելու իրենց եկամտի ավելի փոքր մասնաբաժինը: Այլ կերպ ասած՝ քանի որ *սպառման միջին հակվածությունը (average propensity to consume)*²¹ նվազում է եկամտի աճին զուգընթաց²², եկամուտների բևեռացումը հանգեցնում է ամբողջական պահանջարկի կրճատման: Մյուս կողմից՝ տնտեսավարողները, բախվելով թույլ պահանջարկի և չկարողանալով իրացնել իրենց արտադրանքը, ստիպված են լինում կատարել ճշգրտումներ իրենց գործունեությունում: Այսպիսի

²⁰ G. Kristic, F. Schneider, Formalizing the Shadow Economy in Serbia: Policy Measures and Growth Effects, Springer International Publishing, 2015, էջ 22-23:

²¹ Սպառման միջին հակվածությունը ցույց է տալիս, թե որքան սպառում է բաժին ընկնում 1 միավոր եկամտին:

²² Այս օրինաչափությունը բխում է Քեյնսի սպառման ֆունկցիայից: Առավել մանրամասն տե՛ս Л. Тарасевич, П. Гребенников, А. Леусский, Макроэкономика, Москва-Юрайт, 2012, էջ 66-77:

զարգացումների արդյունքում նրանց մի մասը, խուսափելով հարկերի վճարումից, տեղափոխվում է ոչ ֆորմալ դաշտ:

Որոշ հեղինակներ մատնանշում են նաև այլ ուղիներ, որոնցով եկամուտների անհավասարությունը կարող է ներգործել ստվերային շրջանառության ծավալների վրա: Օրինակ, քանի որ ստվերային արտադրանքը առանձնանում է համեմատաբար ցածր գներով, եկամուտների անհավասարության խորացումը հանգեցնում է դրա պահանջարկի ավելացմանը, ինչն էլ նոր լիցքեր է հաղորդում տնտեսության ոչ ֆորմալ առաջարկին, այն է՝ տնտեսավարողների ստվերային գործունեությանը²³: Բացի այդ, սոցիալական անհավասարության զգացողությունը մեծացնում է հարկատուների անվստահությունը կառավարության նկատմամբ՝ դրդելով նրանց շրջանցել հարկերը²⁴:

Այսպիսով, սոցիալական անհավասարության և ստվերային տնտեսության միջև առկա է անմիջական պատճառահետևանքային կապ. սոցիալական անհավասարության խորացումը որպես կանոն ուղեկցվում է ստվերային շրջանառության ծավալների աճով: Մյուս կողմից, եկամուտների բևեռացումը խորացնող գործոններից է հարկային համակարգի ռեգրեսիվությունը, որով, ինչպես ցույց տրվեց սույն ենթաբաժնում, բնութագրվում է ՀՀ աշխատանքային ռեսուրսների հարկումը: Համադրելով այս դիտարկումները՝ պարզ է դառնում, որ ՀՀ-ում աշխատուժի հարկային բեռի օպտիմալացումը, այն է՝ խիստ պրոգրեսիվ հարկային կանոնների հաստատումը, անհրաժեշտ է նաև ստվերային տնտեսության ֆորմալացման տեսանկյունից²⁵:

1.3. Հարկային եկամուտների կառուցվածքը

Ինչպես բազում այլ զարգացող երկրներում, ՀՀ-ում ևս ավելացված արժեքի հարկը պետական բյուջեի եկամուտների հիմնական աղբյուրն է: Ինչպես ներկայացված է գծապատկեր 1.1-ում, դրա հաշվին ձևավորվում է համախառն հարկային եկամուտների²⁶ 34.18%-ը: Մեծությամբ երկրորդը եկամտային հարկն է՝

²³ A. Mishra, R. Ray, Informality, corruption, and inequality, Bath economics research paper No. 13/10, Department of Economics, University of Bath, 2010, էջ 12-17:


²⁴ J. Rosser, M. Rosser, E. Ahmed, Income inequality and the informal economy in transition economies, Journal of Comparative Economics, Vol. 28, No. 1, 2000, էջ 156-171:

²⁵ A. Berdiev, J. Saunoris, On the Relationship Between Income Inequality and the Shadow Economy, Eastern Economic Journal, Vol. 45, No. 2, 2019, էջ 224-249:

²⁶ Նկատենք, որ 2015-ից ի վեր ՀՀ պետական բյուջեի մուտքերում *սոցիալական վճարների* հոդվածը եղել է զրոյական: Սա կապված է 2013-ի հունվարի 1-ից ուժի մեջ մտած հարկային ռեֆորմի հետ, որով սոցիալական վճարները միացվել են եկամտահարկի հետ, և ձևավորվել է նոր հարկատեսակ՝

27.81%, իսկ երրորդը՝ շահութահարկը՝ 13.27%: Եթե ԱԱՀ-ին գումարենք ակցիզային հարկը, ապա կստանանք այսպես կոչված *սպառման (անուղղակի) հարկերը*²⁷, որոնք ձևավորում են համախառն հարկերի 42.68%-ը: Միաժամանակ, եկամտային հարկը, շահութահարկը և շրջանառության հարկը միավորվում են *արտադրության գործոնների (ուղղակի) հարկեր* հասկացության ներքո, և վերջինս կազմում է համախառն հարկերի 42.75%-ը:

Գծապատկեր 1.1. Հարկային եկամուտների կառուցվածքը ՀՀ-ում 2018թ.²⁸



Անվիճելի է, որ հարկային եկամուտների անարդյունավետ կառուցվածքը խթանում է ստվերային շրջանառությունը: Հետազոտությունները ցույց են տալիս, որ ստվերային տնտեսությունը ավելի մեծ է այն երկրներում, որտեղ պետական բյուջեի կառուցվածքում ուղղակի հարկերը գերազանցում են անուղղակի հարկերին²⁹: Խնդիրն այն է, որ ուղղակի հարկերից ավելի հեշտ է խուսափել: Այս հանգամանքը ունի երեք հիմնական բացատրություն³⁰: Առաջին, ավելի հեշտ է քողարկել եկամուտները, քան վաճառքի գործարքները, քանի որ վաճառքի ոչ ֆորմալ գործարքների կազմակերպման ծախսերը անհամեմատ ավելին են, քան եկամտային հարկը շրջանցելու գործառնական ծախսերը: Երկրորդ, հոգեբանական տեսանկյունից

եկամտային հարկ: Այս է պատճառը, որ այս ժամանակաշրջանում համախառն և զուտ հարկային եկամուտները համարժեք են միմյանց:

²⁷ Գրականությունում սպառման հարկերը նաև ընդունված է անվանել ապրանքների և ծառայությունների հարկեր, ինչպես նաև վաճառքի հարկեր:

²⁸ Տվյալների աղբյուրը՝ International Monetary Fund, Government Finance Statistics, նույն տեղում:


²⁹ P. Caragata, D. Giles, Simulating the Relationship between the Hidden Economy and the Tax Level and Tax Mix in New Zealand, In: G. Scully, P. Caragata (eds) Taxation and the Limits of Government, Springer, Boston, 2000:

³⁰ Նույն տեղում, էջ 9-11:

մարդիկ ավելի շատ հակված են «պաշտպանելու» իրենց եկամուտները, քան ծախսերը, քանի որ եկամուտները դիտարկում են որպես անձնական ունեցվածքի հիմնական աղբյուր, որի վրա տարածվում է սեփականության իրավունքը: Երրորդ, վաճառքի հարկերի համեմատ՝ եկամտային հարկի չվճարումը հարկատուին կարող է բերել ավելի մեծ օգուտներ, քանի որ մարդկանց եկամուտները որպես կանոն գերազանցում են գնումները, և բացի այդ, եկամտային հարկի դրույքաչափը բարձր է վաճառքի հարկերի դրույքաչափերից:

Փորձենք պարզել, թե ուղղակի և անուղղակի հարկերի հարաբերակցության տեսանկյունից ինչպիսին է իրավիճակը ՀՀ-ում:

Գծապատկեր 1.2. Ուղղակի և անուղղակի հարկերի հարաբերակցությունը ՀՀ-ում 2013-2018թթ.³¹



Գծապատկեր 1.2-ը վկայում է, որ 2013-2018թթ ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտներում էական կառուցվածքային տեղաշարժեր չեն արձանագրվել: Ավելին, 2018-ի դրությամբ հարկային բեռը արտադրության գործոնների և ապրանքների ու ծառայությունների միջև բաշխված է հավասարաչափ: Հետևաբար, հարկային եկամուտների կառուցվածքի ազդեցությունը ՀՀ ստվերային տնտեսության վրա կարելի է գնահատել որպես *չեզոք*. այն ո՛չ նպաստել, ո՛չ էլ զսպել է ստվերի

³¹ Տվյալների աղբյուրը՝ International Monetary Fund, Government Finance Statistics, նույն տեղում:

ձևավորման գործընթացը: Այլ կերպ ասած՝ ուղղակի և անուղղակի հարկերի հարաբերակցության գործոնը չի կարող օգտագործվել ՀՀ-ում ստվերային տնտեսության ձևավորումը և դինամիկան բացատրելու համար:

Նշենք նաև, որ ստվերային տնտեսության տեսանկյունից դրական կարելի է համարել 2019-ի հունիսին Ազգային ժողովի կողմից ընդունված և 2020-ի հունվարի 1-ից ուժի մեջ մտած հարկային փոփոխությունների փաթեթի այն դրույթները, որոնք վերաբերում են եկամտային հարկի և շահութահարկի դրույքաչափերի նվազեցմանը և ակցիզային հարկի դրույքաչափերի բարձրացմանը:

1.4. Հարկային վարչարարությունը

Հարկային վարչարարության տեսանկյունից ուշագրավ է Ասատրյանի և Փայքլի (2017) աշխատանքը, որտեղ միկրոտվյալների հիման վրա ցույց է տրվում, որ ՀՀ-ում հարկերից խուսափման ծավալները բավական շոշափելի են³²: Մասնավորապես, նրանք ուսումնասիրում են հարկատուների վարքագծային արձագանքը համախառն եկամտի (շրջանառության) հետևյալ երեք շեմերի կիրարկմանը՝

ա) այն շեմը, որից ներքև Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտները (International Financial Reporting Standards՝ IFRS) պարտադիր չեն և կարող են փոխարինվել հարկային հաշվապահության պարզեցված կանոններով,

բ) այն շեմը, որից ներքև հարկերը կարող են վճարվել եռամսյակային և ոչ թե ամսական պարբերականությամբ,

գ) այն շեմը, որից ներքև ԱԱՀ-ն կարող է փոխարինվել շրջանառության հարկով:

Հեղինակները ցույց են տալիս, որ ՀՀ-ում հարկատուների արձագանքը «ա» կարգավորմանը նշանակալի է, «բ» կարգավորմանը՝ չափավոր, իսկ «գ» կարգավորմանը՝ աննշան: Սա նշանակում է, որ ՀՀ տնտեսավարողների մի մասը հակված է «ցույց տալ» ցածր շրջանառություն, այսինքն՝ թերհայտարարագրել համախառն եկամուտը, որպեսզի հայտնվի ավելի բարենպաստ հարկային ռեժիմում³³: Արդյո՞ք հարկերից խուսափման այս հնարավորությունը պայմանավորված է օրենսդրության բացերով:

³² Z. Asatryan, A. Peichl, Responses of Firms to Tax, Administrative and Accounting Rules: Evidence from Armenia, ZEW Discussion Paper No. 16-065, 2017:

³³ ԱԱՀ-ի պարագայում ստացվող թույլ արձագանքը պայմանավորված է նրանով, որ շեմը ՀՀ-ում, այսպես թե այնպես, բավական բարձր է (նույնիսկ զարգացած երկրների համեմատ): Արդյունքում տնտեսավարողները «ստիպված չեն» թաքցնել իրենց եկամուտները:

ՀՀ-ում հարկային ստուգումների իրավական դաշտը համապատասխանում է միջազգային լավագույն փորձին: Մասնավորապես, ներդրված է *ռիսկի վրա հիմնված հարկային ստուգումների (risk based tax audits)* համակարգը, որը կարգավորվում է «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով³⁴: Վերջինս տնտեսավարող սուբյեկտներին դասակարգում է հետևյալ երեք խմբերում՝ բարձր ռիսկային, միջին ռիսկային և ցածր ռիսկային: Օրենքը նախատեսում է, որ ստուգումները պետք է իրականացնել հետևյալ հաճախականությամբ՝

ա) բարձր ռիսկայնության սուբյեկտներում՝ ոչ ավելի հաճախ, քան տարին 1 անգամ,

բ) միջին ռիսկայնության սուբյեկտներում՝ ոչ ավելի հաճախ, քան 3 տարին 1 անգամ,

գ) ցածր ռիսկայնության սուբյեկտներում՝ ոչ ավելի հաճախ, քան 5 տարին 1 անգամ:

Այս կարգավորումները միտված են երաշխավորելու, որ հարկային վարչարարության շրջանակներում թիրախավորվեն այն ընկերությունները, որոնք ռիսկային են, այսինքն՝ ունեն իրենց եկամուտները թերհայտարարագրելու շարժառիթներ³⁵ և հնարավորություններ: Իսկ այն ընկերությունները, որոնք հարկային մարմնի սահմանած չափանիշներով վստահելի են, թափանցիկ և նվազ ռիսկային, ըստ օրենքի տրամաբանության՝ պետք է հնարավորինս ազատվեն անտեղի հարկային ստուգումների բեռից:

Ամփոփելով վերոհիշյալ դիտարկումները՝ արձանագրենք, որ ՀՀ-ում հարկերից խուսափման ծավալները բավական շոշափելի են՝ չնայած նրան, որ գործում են հարկային վարչարարության խիստ կանոններ: Այդ կանոնների, այն է՝ ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգի ներքո յուրաքանչյուր փոքր կամ միջին ձեռնարկություն ՀՀ-ում հարկային մարմնի կողմից ենթարկվում է ստուգումների ամեն չորս-հինգ տարին մեկ (խոշոր ձեռնարկությունները՝ ավելի հաճախ)³⁶: Սա բավական բարձր հաճախականություն է, եթե նկատի ունենանք, որ զարգացած երկրներում ՓՄՁ-ի հարկային ստուգումները տեղի են ունենում առնվազն հինգ անգամ ավելի հազվադեպ³⁷: Այսպիսով, մի կողմից ունենք առաջադեմ հարկային օրենսդրություն՝

³⁴ Ընդունվել է Ազգային ժողովի կողմից 2000թ. մայիսի 17-ին, ՀՕ-60, ՀՀՊՏ 2000.06.23.14(112):

³⁵ Շարժառիթներից մեկը կարող է լինել այն, որ այդ ընկերությունների համախառն եկամուտը (շրջանառությունը) մոտ է IFRS-ի կամ այլ շեմերին:

³⁶ Z. Asatryan, A. Peichl, նշված աշխատանքը, էջ 32:

³⁷ S. Khwaja, R. Awasthi, J. Loeprick, Risk-Based Tax Audits: Approaches and Country Experiences, World Bank, 2011, էջ 45-54:

համակցված հարկային ստուգումների բարձր հաճախականությամբ, մյուս կողմից՝ հարկերից խուսափման շոշափելի ծավալներ: Այս երկու փաստերը թվում են անհամատեղելի: Չէ՞ որ համաձայն սույն բաժնի նախաբանում նկարագրված Ալլինգհամ-Սանդմոյի մոդելի՝ հարկային ստուգումների բարձր հավանականությունը այն որոշիչ գործոններից է, որ այլ հավասար պայմաններում տնտեսավարողներին պետք է դրդի պատշաճ և օրինապահ վարքագծի:

Վերոհիշյալ դիտարկումների համադրումը բերում է այն եզրակացության, որ խնդիրը հարկային վարչարարության որակն է: Ընդ որում, այստեղ կարելի է առանձնացնել երկու խնդրահարույց ուղղություն: Առաջինը այն չափորոշիչների համակարգն է, որոնց հիման վրա գնահատվում է տնտեսավարողների ռիսկայնությունը: Ակնհայտ է, որ առկա տեխնիկական լուծումների թերությունների պատճառով որոշ ռիսկային տնտեսավարողներ դուրս են մնում հարկային մարմինների «տեսադաշտից»՝ գնահատվելով որպես վստահելի և թափանցիկ: Տնտեսավարողների ռիսկայնություն գնահատման համար անհրաժեշտ է կիրառել ավելի առաջադեմ մեթոդներ, օրինակ՝ *մեծ տվյալների (big data)* վերլուծության ժամանակակից գործիքները³⁸, որոնց օգնությամբ կարելի է ստանալ տնտեսական իրավիճակի առավել համակողմանի նկարագիրը: Երկրորդ խնդրահարույց ուղղությունը կապված է հարկային ստուգումների գործընթացի կողմերի վարքագծի հետ, երբ հարկատուն և հարկային տեսուչը ձեռք են բերում հանցավոր կոռուպցիոն համաձայնություն՝ գործելով ի վնաս հանրային շահի: Բացի այդ, հարկերից խուսափումը կարող է տեղի ունենալ նաև առանց կողմերի գաղտնի համաձայնության: Այսպես, հարկային հաշվետվություններում առկա անհամապատասխանությունները կարող են մնալ չբացահայտված հարկային մարմինների աշխատակիցների գիտելիքների ցածր մակարդակի պատճառով:

Այսպիսով, ՀՀ-ում հարկային վարչարարությունը կարիք ունի էական բարեփոխումների: Սակայն առկա խնդիրները պայմանավորված չեն իրավական կարգավորումների բացերով: Խնդրահարույց է հարկային ստուգումների որակը, որը ունի ինչպես տեխնիկական (տնտեսավարողների ռիսկայնության գնահատման համակարգը), այնպես էլ վարքագծային պատճառներ (կոռուպցիա, հարկային մարմինների աշխատակիցների անբավարար գիտելիքներ):

³⁸ Այս գործիքների մշակման և պրակտիկ կիրառման խնդիրներով զբաղվում է *տվյալների գիտությունը (data science)*, որը վերջին տարիներին ապրում է մեծ զարգացում:

1.5. Եզրահանգումներ

Եզրափակելով ՀՀ հարկային համակարգի հիմնական պարամետրերի վերլուծությունը՝ կարող ենք հերթականությամբ անդրադառնալ սույն բաժնի նախաբանում ձևակերպված «ա»-«դ» հարցադրումներին:

- ՀՀ-ում տնտեսության հարկային բեռը չափավոր է այն իմաստով, որ հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը, ինչպես նաև ԱԱՀ և շահութահարկի դրույքաչափերը առանձնապես բարձր չեն, եթե համեմատենք մի շարք համադրելի երկրների հետ: Այլ կերպ ասած՝ օրենսդրության մակարդակում հարկային կանոնները, մասնավորապես՝ ԱԱՀ և շահութահարկի դրույքաչափերը, ընդհանուր առմամբ համապատասխանում են տնտեսության պոտենցիալ հարկունակությանը: Խնդիրն այն է, սակայն, որ տնտեսության հարկունակությանը չեն համապատասխանում ԱԱՀ-ի և շահութահարկի փաստացի հավաքագրումները: Վերջիններս ավելի ցածր են, քան այն գումարները, որոնք կհամալրեին պետական բյուջեն, եթե իրականությունը լիներ այնպիսին, ինչպիսին նախատեսված է հարկային օրենսդրությամբ: Այլ կերպ ասած՝ ՀՀ հարկային համակարգում առկա են «ճեղքվածքներ», որոնք վկայում են ստվերային շրջանառության գոյության մասին, հատկապես՝ ԱԱՀ և շահութահարկ վճարող տնտեսավարողների շրջանում:
- ՀՀ-ում աշխատանքային ռեսուրսների հարկումը պրոգրեսիվ չէ: Մասնավորապես, հարկային սեպի հաշվարկը ցույց է տալիս, որ աշխատուժի հարկումը ռեգրեսիվ է անվանական աշխատավարձի 0-150,000 դրամ և 500,000-2,000,000 դրամ միջակայքերում: Սա նշանակում է, որ եկամտի այս խմբերում այն վարձու աշխատողը, ով ստանում է ավելի բարձր աշխատավարձ, հարկերի (եկամտային հարկ, պարտադիր կենսաթոշակային և դրոշմանիշային վճարներ) տեսքով վճարում է այդ աշխատավարձի ավելի փոքր մասնաբաժինը: Այսպիսի քաղաքականության հետևանքով մեծանում է խզումը եկամուտների բաշխման վերին և ստորին շերտերի միջև, ինչն էլ բերում է ամբողջական պահանջարկի թուլացման: Չկարողանալով իրացնել իրենց արտադրանքը՝ տնտեսավարողների մի մասը կրում է կորուստներ և գործունեությունը տեղափոխում ստվերային դաշտ:
- Որոշ ուսումնասիրություններ փաստում են, որ ստվերային տնտեսության ծավալները անմիջականորեն կապված են հարկային եկամուտների կառուցվածքի, այն է՝ ուղղակի և անուղղակի հարկերի հարաբերակցության հետ: Մասնավորապես, այն երկրները, որոնցում պետական բյուջեի կառուցվածքում գերակայում են անուղղակի հարկերը, այլ հավասար պայմաններում ունենում են ավելի փոքր ստվերային տնտեսություն: ՀՀ պարագայում հարկային եկամուտների բաշխումը համաչափ է. 42.68%-ը բաժին է ընկնում անուղղակի հարկերին, իսկ

42.75%-ը՝ ուղղակի հարկերին: Ավելին, համանման համաչափ հարաբերակցություն դիտվել է նաև նախընթաց տարիներին՝ 2013-2017թթ.: Սա ցույց է տալիս, որ ՀՀ հարկային եկամուտների կառուցվածքը ունի *չեզոք* ազդեցություն ստվերային տնտեսության վրա: Այլ կերպ ասած՝ ՀՀ-ում ստվերային շրջանառության ծավալների դինամիկան անկախ է ուղղակի և անուղղակի հարկերի հարաբերակցությունից:

- Որոշ ուսումնասիրություններ փաստում են, որ մեծաթիվ են այն դեպքերը, երբ ՀՀ տնտեսավարողները ֆինանսական հաշվետվություններում հայտարարագրում են ավելի ցածր շրջանառություն, քան գոյություն ունի իրականում: Այդ կերպ նրանք չարաշահում են այն հարկային կանոնները, որոնք նախատեսում են ցածր հարկային բեռ որոշակի շեմերից ներքև գործող ընկերությունների համար: Ընդ որում, սա տեղի է ունենում մի իրավիճակում, երբ գործում են հարկային վարչարարության և հարկային ստուգումների խիստ իրավակարգավորումներ: Հետևաբար, խնդիրը հարկային վարչարարության որակն է, որը անհրաժեշտ է բարելավել մի քանի ուղղություններով՝ բարձրացնելով հարկային մարմինների աշխատակիցների որակավորումը, բացառելով կոռուպցիոն ռիսկերը, կատարելագործելով տնտեսավարող սուբյեկտների ռիսկայնության գնահատման համակարգը:

1-ին բաժինը թույլ տվեց ձևավորել որոշակի *որակական* գնահատականներ ՀՀ տնտեսության հարկային բեռի վերաբերյալ: Այդ գնահատականների մի մասը նկարագրում է այն ուղիները, որոնցով անարդյունավետ հարկային բեռը կարող է հանգեցնել ստվերային շրջանառության ձևավորման: Այդուհանդերձ, այս փոխառնչության *քանակական* բնութագրերը մնացել են դեռևս չբացահայտված: Այդ պատճառով 2-րդ բաժնում փորձ է արվել մոդելավորելու ՀՀ ստվերային տնտեսության ձևավորումը հարկային բեռի ազդեցության համատեքստում: Ինչպես արդեն ցույց է տրվել 1-ին բաժնում, գոյություն ունեն հարկային բեռի բազում ցուցիչներ՝ հարկեր/ՀՆԱ, առանձին հարկատեսակներ/ՀՆԱ, հարկային սեպ և այլն: Միաժամանակ, տնտեսաչափության տեսությունը հուշում է, որ և՛ բովանդակային, և՛ տեխնիկական պատճառներով օգտակար է կենտրոնանալ տվյալ երևույթը նկարագրող մեկ փոփոխականի վրա³⁹: Այս է պատճառը, որ 2-րդ բաժնում հարկային բեռի ցուցիչներից դիտարկվել է միայն ամենաառաջնայինը՝ հարկեր/ՀՆԱ

³⁹ J. Angrist, J. Pischke, Mostly Harmless Econometrics: An Empiricist's Companion, Princeton University Press, էջ 21-81:

հարաբերակցությունը: Վերջինս ներառվել է ստվերի գնահատման տնտեսաչափական մոդելում՝ որպես առանցքային բացատրող փոփոխական

2. ՍՏՎԵՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ

Միջազգային փորձը վկայում է, որ տնտեսական քաղաքականությունը կարող է հաջողել, եթե հենվում է արժանահավատ և համակողմանի տեղեկատվության վրա: Վերջինս թույլ է տալիս իրականացնել մակրոտնտեսական իրավիճակի ճշգրիտ ախտորոշում՝ հիմքեր ստեղծելով արդյունավետ կառավարչական որոշումների համար: Այս տեսանկյունից չափազանց կարևոր է ՀՀ ստվերային տնտեսության ծավալների քանակական գնահատումը, ինչը թույլ կտա կարգաբերել հարկաբյուջետային քաղաքականության գործիքները և թիրախները, ինչպես նաև սահմանափակել չգրանցված տնտեսական գործունեությունը: Ստվերային շրջանառության սահմանափակումը կրերի պետական բյուջեի եկամուտների ավելացման՝ ստեղծելով տնտեսական ակտիվությունը խթանելու նոր հնարավորություններ:

Ստվերային տնտեսության գնահատման մեթոդները կարելի է բաժանել երկու խմբի՝ ուղղակի և անուղղակի: Ուղղակի մեթոդների հիմքում մասնավոր և հանրային հարցումներն են, որոնք թիրախավորում են ոչ ֆորմալ զբաղվածներին՝ բացահայտելու նրանց ստվերային եկամուտները: Վերլուծական մակարդակում առավել հետաքրքիր են անուղղակի մեթոդները, որոնց հիմքում մակրոտնտեսական համամասնությունների մոդելավորումն է: Անուղղակի մեթոդներից առավել տարածված են MIMIC (multiple indicators, multiple causes՝ բազմաթիվ ցուցանիշներ, բազմաթիվ պատճառներ) մոդելը և կանխիկի պահանջարկի մեթոդը:

MIMIC մոդելը ապավինում է չդիտարկվող փոփոխականների վիճակագրական տեսությանը: Տվյալ դեպքում չդիտարկվողը ստվերային տնտեսությունն է, որը «միջնորդի» դեր է կատարում մի շարք մուտքային և ելքային փոփոխականների միջև: Այս մոդելը, սակայն, ենթադրում է կառուցվածքային հավասարումներ մուտքային և ելքային ցուցանիշների միջև, որոնք հնարավոր է բացահայտել և գնահատել միայն տարեկան տվյալների համատեքստում: Քանի որ տարեկան պարբերականության դեպքում ՀՀ տնտեսությունը բնութագրող ժամանակային շարքերի երկարությունը խիստ անբավարար է, այս մոդելի կիրառությունը նպատակահարմար չէ: Սույն վերլուծությունում կիրառվել է կանխիկի պահանջարկի մեթոդը:

2-րդ բաժինը կառուցվել է հետևյալ տրամաբանությամբ: 2.1-ին ենթաբաժնում տրվել են անհրաժեշտ մաթեմատիկական նշանակումները: 2.2-րդ ենթաբաժնում

նկարագրվել է ստվերային տնտեսության գնահատման՝ կանխիկի պահանջարկի մեթոդի էությունը: 2.3-րդ ենթաբաժինը նվիրված է մոդելային հաշվարկներում օգտագործվող տվյալների նկարագրությանը, իսկ 2.4-րդ ենթաբաժինը՝ կանխիկի պահանջարկի մեթոդի վրա հիմնված տնտեսաչափական մոդելի կառուցմանը: 2.5-րդ ենթաբաժնում ամփոփվել են մոդելային հաշվարկները և ներկայացվել է ՀՀ ստվերային տնտեսության գնահատականը: Վերջապես, 2.6-րդ ենթաբաժնում ամփոփվել են նախորդ ենթաբաժինների հիմնական արդյունքները, և կատարվել են եզրահանգումներ:

2.1. Որոշ մաթեմատիկական նշանակումներ

Ստվերային տնտեսության գնահատման խնդրում կօգտագործվեն հետևյալ նշանակումները.

- t ՝ ուսումնասիրվող ժամանակահատվածը, որը մեկնարկում է 2001 թվականի առաջին եռամսյակից և ավարտվում 2019 թվականի երրորդ եռամսյակով,
- C_t ՝ բանկային համակարգից դուրս (շրջանառության մեջ) կանխիկ դրամը՝ նորմավորված ՀՆԱ դեֆլյատորի օգնությամբ, t եռամսյակում,
- T_t ՝ համախմբված բյուջեի համախառն հարկային եկամուտների (ներառյալ սոցիալական վճարները և պետական տուրքերը) հարաբերությունը անվանական ՀՆԱ-ին t եռամսյակում,
- R_t ՝ ավանդների միջին տոկոսադրույքը t եռամսյակում,
- GDP_t ՝ իրական ՀՆԱ-ն t եռամսյակում, այն է՝ անվանական ՀՆԱ-ն՝ նորմավորված ՀՆԱ դեֆլյատորի օգնությամբ,
- M_t ՝ փողի լայն զանգվածը՝ նորմավորված ՀՆԱ դեֆլյատորի օգնությամբ, t եռամսյակում:

2.2. Կանխիկի պահանջարկի մեթոդի հիմունքները

Ստվերային տնտեսության գնահատման՝ կանխիկի պահանջարկի մեթոդի էությունը հետևյալն է: Ինչպես արդեն հիմնավորվել է նախորդ բաժնում, ծանր հարկային բեռը տնտեսավարողներին ուղղորդում է դեպի ոչ ֆորմալ դաշտ: Մյուս կողմից հայտնի է, որ ստվերային գործարքները իրականացվում են հիմնականում կանխիկով: Հետևաբար ստվերային տնտեսության «հետքերը» անհրաժեշտ է փնտրել *հարկեր-կանխիկ* փոխառնչությունում:

Հաշվի առնելով վերոհիշյալ տրամաբանությունը՝ ընդհանուր գծերով նկարագրենք այս մեթոդի պրակտիկ իրագործումը՝ մանրամասները թողնելով 2.4-րդ

և 2.5-րդ ենթաբաժիններին: Դիտարկվում է հետևյալ մաթեմատիկական կախվածությունը.

$$\ln(C_t) = F(\ln(1 + T_t), \ln(R_t), \ln(GDP_t))^{40}, \quad (1)$$

որտեղ $\ln(\cdot)$ բնական հիմքով լոգարիթմի օպերատորն է:

(1) հավասարումը շրջանառության մեջ կանխիկ դրամի ծավալը $F(\cdot)$ ֆունկցիայի միջոցով կապակցում է հարկային բեռի, տոկոսադրույքների և ազգային եկամտի հետ: Քննության է առնվում մի հիպոթետիկ իրավիճակ, երբ տնտեսական գործունեության բոլոր տեսակները ազատված են հարկերից, այսինքն՝ $T_t = 0$: Տրամաբանական է ենթադրել, որ այսպիսի տնտեսությունում կբացակայի նաև ստվերը, քանի որ չի լինի ֆորմալ գործունեությունից խուսափելու որևէ դրդապատճառ: Այս պայմաններում կանհետանա նաև կանխիկ շրջանառության այն հատվածը, որը սպասարկում է ստվերային գործարքները: Իսկ կանխիկի մնացած մասը կորոշվի հետևյալ բանաձևով.

$$\tilde{C}_t = \exp(F(\ln(1 + 0), \ln(R_t), \ln(GDP_t))) = \exp(F(0, \ln(R_t), \ln(GDP_t))): \quad (2)$$

Եթե $\hat{C}_t$ -ով նշանակենք կանխիկ դրամի այն ծավալը, որը բացատրող փոփոխականների փաստացի (և ոչ թե հիպոթետիկ) արժեքների պարագայում կանխատեսվում է (1) հավասարման միջոցով, ապա

$$EC_t = \hat{C}_t - \tilde{C}_t \quad (3)$$

մեծության միջոցով կարելի է պատկերացում կազմել ավելցուկային կանխիկի մասին: Վերջինս բազմապատկելով փողի շրջապտույտի արագությամբ՝ հնարավոր է գնահատել չգրանցված տնտեսության ծավալը:

Այս մոտեցման ակունքները հասնում են անցյալ դարի 50-ական թվականները: Մասնավորապես, Կագանը (Cagan 1958)⁴¹ 1919-1955թթ. կտրվածքով դիտարկել է կանխիկի պահանջարկի և հարկերի փոխկախվածությունը ԱՄՆ-ում: 20 տարի անց Գուտմանը (Gutmann 1977)⁴² կիրառել է նույն մոտեցումը՝ առանց վիճակագրական

⁴⁰ Նկատենք, որ $F(\cdot)$ ֆունկցիայի առաջին արգումենտի պարագայում $\ln(\cdot)$ -ը կիրառված է $1 + T_t$ -ի և ոչ թե T_t -ի նկատմամբ: Պատճառն այն է, որ $\ln(\cdot)$ -ը սահմանված չէ 0 կետում այն դեպքում, երբ կանխիկի պահանջարկի մեթոդը պահանջում է դիտարկել նաև $T_t = 0$ դեպքը:

⁴¹ P. Cagan, The demand for currency relative to total money supply, Journal of Political Economy, Vol. 66, No. 4, 1958, էջ 303-328:

⁴² P. Gutmann, Subterranean economy, Financial Analysis Journal, Vol. 33, No. 6, 1977, էջ 26-27:

հաշվարկների: Կազանի մեթոդը զարգացվել է Թանզիի (Tanzi 1980, 1983)⁴³ կողմից, ով 1929-1980թթ. համար գնահատել է կանխիկի պահանջարկի ֆունկցիան ԱՄՆ-ում՝ նպատակ ունենալով հաշվարկել ստվերային տնտեսության ծավալը: Սակայն նրա ընտրած ցուցանիշները որոշակիորեն տարբերվում են (1) հավասարման գործոններից: Որպես կախյալ փոփոխական Թանզին դիտարկել է կանխիկի հարաբերակցությունը փողի լայն զանգվածին, իսկ որպես անկախ փոփոխականներ՝ միջին կշռված հարկադրույքը, միջին ավանդային տոկոսադրույքը, շնչային ՀՆԱ-ն, ինչպես նաև աշխատավարձերի հարաբերակցությունը ազգային եկամտին: Սույն վերլուծությունը հետևում է ավելի նոր մշակումներին (Macias, Cazzavillan 2009, Hassan, Schneider 2016)⁴⁴, որոնք ստվերային տնտեսության «հետքերը» փնտրում են ՀՆԱ դեֆլյատորի միջոցով նորմավորված կանխիկի կամ 1 շնչին բաժին ընկնող կանխիկի վարքագծում: Այս պարագայում նպատակահարմար է կատարել ճշգրտումներ նաև անկախ փոփոխականների Թանզիի ցանկում՝ շնչային ՀՆԱ-ն փոխարինելով իրական ՀՆԱ-ով, իսկ հարկադրույքը՝ հարկեր/ՀՆԱ հարաբերակցությամբ:

2.3. Տվյալների նկարագրությունը

Տվյալների աղբյուրը ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակումներն են, մասնավորապես՝ «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը» ամենամսյա զեկույցները: Մոդելավորվող (բայց ոչ ելակետային) ժամանակային շարքերի պարբերականությունը եռամսյակային է: Քանի որ եռամսյակային տվյալներում առկա է սեզոնայնություն, բոլոր վերջնական շարքերը նախ ենթարկվել են սեզոնային ճշգրտման՝ ըստ Census X12 մեթոդի, այնուհետև անցել լոգարիթմական ֆիլտրի միջով (ինչպես ներկայացված է (1) հավասարման մեջ): Անդրադառնանք տվյալների նախնական մշակման որոշ առանձնահատկությունների:

- Շրջանառության մեջ կանխիկ դրամի և փողի լայն զանգվածի ելակետային պարբերականությունը ամսական է: Անհրաժեշտ է այս տվյալները դարձնել եռամսյակային, քանի որ ՀՆԱ-ի պարագայում, օրինակ, տվյալները կա՛մ տարեկան են, կա՛մ եռամսյակային: Քանի որ փողի ագրեգատները, այդ թվում՝

⁴³ ա) V. Tanzi, The underground economy in the United States: estimates and implications, Banca Nazionale del Lavoro, 135, 1980, էջ 427-453:

բ) V. Tanzi, The underground economy in the United States: annual estimates, 1930-1980, IMF Staff Papers, 30, 1983, էջ 283-305:

⁴⁴ ա) J. Macias, G. Cazzavillan, The dynamics of parallel economies. Measuring the informal sector in Mexico, Research in Economics, Vol. 63, No. 3, 2009, էջ 189-199:

բ) M. Hassan, F. Schneider, Modelling the Egyptian Shadow Economy: A MIMIC model and A Currency Demand Approach, Vol. 3, No. 2, 2016, էջ 309-339:

շրջանառության մեջ կանխիկ դրամը և փողի լայն զանգվածը, պաշար-ցուցանիշներ են, ամսական տվյալները ագրեգացվել են հետևյալ տրամաբանությամբ. առաջին եռամսյակին համապատասխանեցվել է մարտ ամսվա ցուցանիշը, երկրորդ եռամսյակին՝ հունիսինը, երրորդ եռամսյակին՝ սեպտեմբերինը, չորրորդ եռամսյակին՝ դեկտեմբերինը:

- Ամսական է նաև միջին ավանդային տոկոսադրույքը: Սակայն քանի որ այն հոսք-ցուցանիշ է, նրա ագրեգացումը կատարվել է համապատասխան երեք ամիսների ցուցանիշների պարզ միջին թվաբանականի միջոցով:
- Ինչպես արդեն նշվել է, շրջանառության մեջ կանխիկ դրամը, անվանական ՀՆԱ-ն և փողի լայն զանգվածը նորմավորվել են ՀՆԱ դեֆլյատորի օգնությամբ: Նպատակը գնաճի ազդեցության չեզոքացումն է ցուցանիշների իրական դինամիկան հասկանալու համար: Ընդ որում, կիրառվել է դեֆլյատորի այն տարբերակը, որը չափում է *գների մակարդակը* 2009-ի առաջին եռամսյակի նկատմամբ: Այլ կերպ ասած՝ 2009-ի առաջին եռամսյակում գների մակարդակը համարվել է 100%, իսկ մնացած եռամսյակների մակարդակը դուրս է բերվել ՀՆԱ դեֆլյատորի շղթայական ինդեքսի օգնությամբ:
- Որպես փողի առաջարկի ցուցիչ ընտրվել է M2X ագրեգատը, այն է՝ փողի լայն զանգվածը, որը ներառում է ոչ միայն շրջանառության մեջ կանխիկ դրամը և դրամային ավանդները, այլև արտարժույթային ավանդները: Խնդիրն այն է, որ ՀՀ տնտեսության դոլարացման ներկայիս բարձր մակարդակի պայմաններում փողի առաջարկը լավագույնս մոտարկվում է M2X ագրեգատի միջոցով: Այս մոտեցումը կիսում է նաև ՀՀ կենտրոնական բանկը⁴⁵:

2.4. Մոդելի կառուցումը

Կանխիկի պահանջարկի մեթոդի առանձնահատկությունն այն է, որ կառուցվող մոդելի վիճակագրական հատկությունների մեծ մասը, օրինակ՝ գործակիցների վիճակագրական նշանակալիությունը, ունի երկրորդական նշանակություն⁴⁶: Խնդիրն այն է, որ տվյալ դեպքում տնտեսաչափական մոդելավորման նպատակը ոչ թե նորմատիվային է (օրինակ՝ կանխատեսում կամ վարկածների փորձարկում), այլ պոզիտիվային, այն է՝ կանխիկի պահանջարկի ֆունկցիայի դուրսբերում՝ որոշակի հաշվարկներում այն կիրառելու նպատակով: Այդուհանդերձ, սույն վերլուծության

⁴⁵ Փողի ագրեգատների էությունը և կիրառման շրջանակները, ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկ, ՀՀ կենտրոնական բանկ, էջ 37, <https://bit.ly/3dZHa6A> (այցելվել է 27.03.2020թ.):

⁴⁶ V. Tanzi, The underground economy in the United States: annual estimates, 1930-1980, IMF Staff Papers, 30, 1983, էջ 283-305:

շրջանակներում նաև ստուգվում են որոշ տեխնիկական հայտանիշներ՝ անհրաժեշտության դեպքում նորմատիվային բնույթի դատողություններ կատարելու համար:

Նախ ստուգենք ժամանակային շարքերի ստացիոնարությունը՝ կիրառելով Դիկի-Ֆուլլերի ընդլայնված թեստը: Այստեղ գրոյական վարկածը տվյալ շարքում միավոր արմատի առկայությունն է, այսինքն՝ ոչ ստացիոնարությունը: Ինչպես երևում է Աղյուսակ 2.1-ից, գրոյական վարկածը չի կարող մերժվել ոչ մի ժամանակային շարքի պարագայում: Սա նշանակում է, որ դիտարկվող փոփոխականները ոչ ստացիոնար են:

Աղյուսակ 2.1. Դիկի-Ֆուլլերի ընդլայնված թեստը (ADF)

Ժամանակային շարքը	t-վիճականի				p-արժեք
	Դիկի-Ֆուլլերի ընդլայնված թեստ	1%	5%	10%	
$\ln(C_t)$ ՝ բանկային համակարգից դուրս կանխիկ դրամ (սեզոնային ճշգրտված, լոգարիթմական)	-1.98	-3.52	-2.90	-2.59	0.29
$\ln(1+T_t)$ ՝ հարկեր ՀՆԱ (սեզոնային ճշգրտված, լոգարիթմական)	-1.66				0.45
$\ln(R_t)$ ՝ ավանդային տոկոսադրույք (սեզոնային ճշգրտված, լոգարիթմական)	-2.09				0.25
$\ln(GDP_t)$ ՝ իրական ՀՆԱ (սեզոնային ճշգրտված, լոգարիթմական)	-1.70				0.43

Ծանոթագրություններ. Զրոյական վարկածը տվյալ ժամանակային շարքում միավոր արմատի առկայությունն է, այսինքն՝ փոփոխականի ոչ ստացիոնարությունը: 1%, 5%, 10% սյունակներում տրված են թեստային վիճականու համապատասխան կրիտիկական արժեքները: p-արժեքը ցույց է տալիս գրոյական վարկածի տեղի ունենալու հավանականությունը:

Հաջորդիվ անհրաժեշտ է պարզել փոփոխականների ինտեգրման կարգը: Այդ նպատակով Դիկի-Ֆուլլերի ընդլայնված թեստը կիրառենք փոփոխականների առաջին տարբերությունների նկատմամբ: Արդյունքները ներկայացված են Աղյուսակ 2.2-ում: Ինչպես տեսնում ենք, բոլոր ժամանակային շարքերի առաջին տարբերությունները ստացիոնար են նույնիսկ ըստ 1% նշանակալիության մակարդակի: Սա նշանակում է, որ դիտարկվող չորս փոփոխականներն էլ առաջին կարգի ինտեգրվող են:

Աղյուսակ 2.2. Դիկի-Ֆուլլերի ընդլայնված թեստը (ADF) փոփոխականների առաջին տարբերությունների դեպքում

Ժամանակային շարքը (առաջին տարբերությամբ)	t-վիճականի				p-արժեք
	Դիկի-Ֆուլլերի ընդլայնված թեստ	1%	5%	10%	
$\ln(C_t)$ ՝ բանկային համակարգից դուրս կանխիկ դրամ (սեզոնային ճշգրտված, լոգարիթմական)	-5.89	-3.52	-2.90	-2.59	0.00
$\ln(1+T_t)$ ՝ հարկեր ՀՆԱ (սեզոնային ճշգրտված, լոգարիթմական)	-13.70				0.00
$\ln(R_t)$ ՝ ավանդային տոկոսադրույք (սեզոնային ճշգրտված, լոգարիթմական)	-6.22				0.00
$\ln(GDP_t)$ ՝ իրական ՀՆԱ (սեզոնային ճշգրտված, լոգարիթմական)	-8.80				0.00

Ծանոթագրություններ. Զրոյական վարկածը տվյալ ժամանակային շարքում միավոր արմատի առկայությունն է, այսինքն՝ փոփոխականի ոչ ստացիոնարությունը: 1%, 5%, 10% սյունակներում տրված են թեստային վիճականու համապատասխան կրիտիկական արժեքները: p-արժեքը ցույց է տալիս զրոյական վարկածի տեղի ունենալու հավանականությունը:

Հաշվի առնելով վերոհիշյալը՝ տրամաբանական է ստուգել կոինտեգրացիայի, այսինքն՝ *երկարաժամկետ, կայուն* հարաբերակցության առկայությունը դիտարկվող չորս փոփոխականների միջև: Ընդհանրապես, ժամանակային շարքերը կոինտեգրվող են, եթե՝

- ա) դրանցից յուրաքանչյուրը առաջին կարգի ինտեգրվող է և
- բ) դրանց միջև կապը հիմնավորվում է տնտեսագիտության տեսությամբ և
- գ) դրանց գծային համակցությունը ստացիոնար է:

Արդեն ցույց է տրվել, որ փոփոխականները բավարարում են «ա» պայմանին (տե՛ս նաև Աղյուսակ 2.2-ը): Մյուս կողմից՝ (1) առնչությունը, այն է՝ կանխիկի կախվածությունը հարկային բեռից, ավանդային տոկոսադրույքից և ազգային եկամտից, դուրս է բերվում փողի պահանջարկի տեսություններից: Ավելին, այդ տեսությունները կանխատեսում են, որ հարկային բեռի և ազգային եկամտի ազդեցությունը կանխիկի ծավալի վրա դրական է, իսկ ավանդային տոկոսադրույքինը՝ բացասական: Սա նշանակում է, որ բավարարված է նաև «բ» պայմանը: Մնում է թեստավորել «գ» պայմանը, որը կարելի է իրականացնել անուղղակիորեն՝ Յոհանսենի թեստի միջոցով, կամ ուղղակիորեն՝ ստուգելով փոփոխականների գծային համակցությանը համապատասխանող մնացորդների ստացիոնարությունը: Նպատակահարմար է կիրառել և՛ առաջին, և՛ երկրորդ մոտեցումները:

Ակսենք Յոհանսենի թեստից: Այն պահանջում է սահմանել լագերի օպտիմալ երկարությունը (տարբերություններով շարքերի համար): Վերջինս որոշելու համար կազմում ենք վեկտորական ավտոռեգրեսիվ մոդել (VAR) և դիտարկում լագերի երկարության ընտրության հետևյալ չափանիշները. ճշմարտանմանության գործակից (LR), կանխատեսման վերջնական սխալ (FPE), Ակայկեի տեղեկատվական չափանիշ (AIC), Շվարցի տեղեկատվական չափանիշ (SC), Հաննան-Քուինի տեղեկատվական չափանիշ (HQ)⁴⁷ (տե՛ս Աղյուսակ 2.3):

Աղյուսակ 2.3. Լագերի օպտիմալ երկարությունը

Լագ	LogL	LR	FPE	AIC	SC	HQ
0	414.17	NA	4.70E-11	-12.43	-12.30*	-12.38
1	440.20	48.11*	3.47e-11*	-12.73*	-12.07	-12.47*
2	450.97	18.61	4.09E-11	-12.57	-11.38	-12.10
3	462.42	18.38	4.76E-11	-12.44	-10.71	-11.76
4	469.37	10.32	6.44E-11	-12.16	-9.91	-11.27
5	481.42	16.43	7.58E-11	-12.04	-9.26	-10.94
6	498.33	21.01	7.89E-11	-12.07	-8.75	-10.76
7	512.74	16.15	9.13E-11	-12.02	-8.17	-10.50
8	531.91	19.17	9.52E-11	-12.12	-7.74	-10.39

Ծանոթագրություններ. Թեստը կիրառվել է հետևյալ փոփոխականների առաջին տարբերությունների նկատմամբ. $\ln(C_t)$ ՝ բանկային համակարգից դուրս կանխկիկ դրամ, $\ln(1 + T_t)$ ՝ հարկեր/ՀՆԱ, $\ln(R_t)$ ՝ ավանդային տոկոսադրույք, $\ln(GDP_t)$ ՝ իրական ՀՆԱ: LogL-ը ճշմարտանմանության ֆունկցիայի լոգարիթմն է, որի նկատմամբ հաշվարկվում են թեստային վիճականիները: *-ը և գունավորումը մատնանշում են լագերի երկարությունը՝ ընտրված համապատասխան չափանիշով (LR, FPE, AIC, SC, HQ): LR՝ Likelihood ratio (ճշմարտանմանության գործակից), FPE՝ Final prediction error (կանխատեսման վերջնական սխալ), AIC՝ Akaike information criterion (Ակայկեի տեղեկատվական չափանիշ), SC՝ Schwarz information criterion (Շվարցի տեղեկատվական չափանիշ), HQ՝ Hannan-Quinn information criterion (Հաննան-Քուինի տեղեկատվական չափանիշ):

Աղյուսակ 2.3-ը ցույց է տալիս, որ համաձայն դիտարկվող 5 չափանիշներից 4-ի՝ լագերի օպտիմալ երկարությունը 1 է: Հետևաբար, Յոհանսենի թեստում *լագային միջակայք* պարամետրին պետք է տալ 1 արժեքը:

Աղյուսակ 2.4-ը ամփոփում է Յոհանսենի թեստի արդյունքները: Համաձայն «Trace» ենթաթեստի՝ լագերի տվյալ երկարության (այն է՝ 1-ի) պարագայում գոյություն ունի միայն մեկ կոինտեգրվող առնչություն, իսկ համաձայն «Max-Eigen»-ի՝ դիտարկվող 4 փոփոխականների միջև կոինտեգրվող առնչություն գոյություն չունի: Քանի որ (1) առնչության տեսական հիմքերը բավական ամուր են, առավել արժանահավատ է

⁴⁷ Այս վիճակագրական չափանիշների մասին առավել մանրամասն տե՛ս H. Luetkepohl, Introduction to Multiple Time Series Analysis, New York: Springer-Verlag, 1991 էջ 128-137:

«Trace» ենթաթեստի արդյունքը: Սա նշանակում է, որ $\ln(C_t)$ ՝ բանկային համակարգից դուրս կանխկիկ դրամ, $\ln(1 + T_t)$ ՝ հարկեր/ՀՆԱ, $\ln(R_t)$ ՝ ավանդային տոկոսադրույք, և $\ln(GDP_t)$ ՝ իրական ՀՆԱ, փոփոխականները ձևավորում են երկարաժամկետ հավասարակշռություն:

Աղյուսակ 2.4. Կոինտեգրացիայի Յոհանսենի թեստը

Կոինտեգրվող առնչությունների քանակը	«Trace» ենթաթեստ		«Max-Eigen» ենթաթեստ	
	վիճականի	5% կրիտիկական արժեք	վիճականի	5% կրիտիկական արժեք
0	53.47	53.12	23.17	28.14
առավելագույնը 1	30.30	34.91	15.79	22.00
առավելագույնը 2	14.52	19.96	10.92	15.67
առավելագույնը 3	3.59	9.24	3.59	9.24

Ծանոթագրություններ. Թեստը կիրառվել է հետևյալ փոփոխականների նկատմամբ. $\ln(C_t)$ ՝ բանկային համակարգից դուրս կանխկիկ դրամ, $\ln(1 + T_t)$ ՝ հարկեր/ՀՆԱ, $\ln(R_t)$ ՝ ավանդային տոկոսադրույք, $\ln(GDP_t)$ ՝ իրական ՀՆԱ: Վիճակագրական եզրահանգումը կատարվում է հետևյալ կերպ. հերթականությամբ ստուգվում են կոինտեգրվող առնչությունների քանակի վերաբերյալ վարկածները: Ֆիքսվում է առաջինը մերժված վարկածը, և դրան հաջորդող վարկածի վերին շեմը ընդունվում է որպես կոինտեգրվող առնչությունների քանակ:

Անցնելով «գ» պայմանի թեստավորման ուղղակի մոտեցմանը՝ դիտարկենք վերոհիշյալ երկարաժամկետ հավասարակշռությունը՝ գնահատված սովորական ՓՔԵ-ով.

$$\left\{ \begin{array}{l} \ln(C_t) = -6.23 + 0.74 \ln(1 + T_t) - 0.04 \ln(R_t) + 1.30 \ln(GDP_t) + \varepsilon_t \\ \quad \quad \quad (0.93) \quad (0.29) \quad \quad (0.06) \quad \quad (0.15) \\ \varepsilon_t = 0.68 \varepsilon_{t-4} + u_t \\ \quad \quad \quad (0.11) \end{array} \right. , \quad (4)$$


որտեղ փակագծերում տրված են համապատասխան գործակիցների ստանդարտ սխալները:

(4) հավասարման բոլոր գործակիցների նշանները համապատասխանում են առողջ տրամաբանությանը: Իսկապես, հարկային բեռի աճը ուղեկցվում է կանխիկ շրջանառության աճով, որովհետև այլ հավասար պայմաններում ավելանում է սովերը: Ավանդային տոկոսադրույքի աճը ավելացնում է կանխիկի այլընտրանքային ծախսերը (քանի որ մարդիկ կարող են ստանալ բաժր տոկոսային եկամուտներ՝ դրամական միջոցները ներդնելով բանկերում)՝ հանգեցնելով վերջինիս ծավալների կրճատման: Վերջապես, ՀՆԱ-ի աճի արդյունքում ավելանում են մարդկանց եկամուտները, ինչն էլ նպաստում է շրջանառվող կանխիկի ծավալների աճին:

Նկատենք, որ «գ» պայմանը, այն է՝ դիտարկվող փոփոխականների գծային համակցության ստացիոնարությունը, վիճակագրորեն համարժեք է u_t գործընթացի ստացիոնարությանը: Ընդ որում, ի տարբերություն «գ» պայմանի, u_t -ի ստացիոնարությունը հնարավոր է թեստավորել էմպիրիկ մեթոդներով, ինչն էլ իրագործվում է ստորև:

Նախ դիտարկենք u_t -ի, այսինքն՝ (4) մոդելի մնացորդների վարքագիծը (գծապատկեր 2.1): Նկատենք, որ մնացորդները էականորեն չեն շեղվում զրոյական առանցքից, ինչը հուշում է, որ առաջարկվող մոտարկումը բավական հաջող է: Այս մասին է վկայում նաև գծապատկեր 2.1-ի մյուս 2 կորերի փոխդասավորվածությունը, որի ներքո կախյալ փոփոխականի գնահատված արժեքները սերտորեն հետևում են փաստացի արժեքներին: Ավելին, մնացորդների տատանումները զրոյական առանցքի շուրջ բավականաչափ կայուն են՝ նմանվելով ստացիոնար գործընթացի: Այս վերջին վարկածը ստուգելու նպատակով կրկին կիրառենք Դիկի-Ֆուլլերի ընդլայնված թեստը:

Գծապատկեր 2.1. Կանխիկի պահանջարկի (4) մոդելի մնացորդները, փաստացի և գնահատված արժեքները



Աղյուսակ 2.5-ը ցույց է տալիս, որ (4) մոդելի մնացորդները ստացիոնար են ըստ նշանակալիության 5% մակարդակի: Սա նշանակում է, որ (4) մոդելի գործակիցները ունակային են (consistent), հետևաբար մոդելը կարելի է օգտագործել ստվերային տնտեսության գնահատման համար:

**Աղյուսակ 2.5. Դիկի-Ֆուլլերի ընդլայնված թեստը (ADF)
կանխիկի պահանջարկի (4) մոդելի մնացորդների դեպքում**

	Է-վիճականի	p-արժեք
Դիկի-Ֆուլլերի ընդլայնված թեստ	-2.91	0.049
Կրիտիկական արժեքներ		
1%	-3.52	
5%	-2.90	
10%	-2.59	

Ծանոթագրություններ. Զրոյական վարկածը տվյալ ժամանակային շարքում միավոր արմատի առկայություն է, այսինքն՝ փոփոխականի ոչ ստացիոնարությունը: 1%, 5%, 10% սյունակներում տրված են թեստային վիճականու համապատասխան կրիտիկական արժեքները: p-արժեքը ցույց է տալիս զրոյական վարկածի տեղի ունենալու հավանականությունը:

Մնում է ստուգել, թե արդյոք ստացված երկարաժամկետ հավասարակշռությունը նաև կայուն է այն իմաստով, որ տատանումները հավասարակշռությունից կրեն կարճաժամկետ բնույթ, և տնտեսությունը ինքնաբերաբար վերադառնա իր կայուն վիճակին: Այդ նպատակով անհրաժեշտ է կառուցել *սխալների ճշգրտման մոդել* (ECM՝ error correction model): Հաշվի առնելով Աղյուսակ 2.3-ի տեղեկատվությունը, համաձայն որի դիտարկվող ցուցանիշների համախմբի դեպքում լագերի օպտիմալ երկարությունը 1 է, սխալների ճշգրտման մոդելը ընդունեց հետևյալ տեսքը.

$$\begin{aligned} \Delta \ln(C_t) = & \underbrace{-0.06}_{(0.09)} u_{t-1} + \underbrace{0.45}_{(0.16)} \Delta \ln(C_{t-1}) - \underbrace{0.13}_{(0.15)} \Delta \ln(1 + T_{t-1}) - \\ & \underbrace{-0.03}_{(0.09)} \Delta \ln(R_{t-1}) + \underbrace{0.12}_{(0.24)} \Delta \ln(GDP_{t-1}) + \mu_t, \end{aligned} \quad (5)$$

որտեղ Δ -ն առաջին տարբերության օպերատորն է, և փակագծերում տրված են համապատասխան գործակիցների ստանդարտ սխալները:

Այստեղ ուշադրության է արժանի միայն u_{t-1} գործոնը, որը ներկայացնում է այն նույն ստացիոնար մնացորդները (*սխալները*), որոնք գեներացվում են (4) մոդելով: Դրա գործակիցը բացասական է (թեև ոչ նշանակալի), ինչը վկայում է այն մասին, որ *սխալները* հակված են *ճշգրտվելու*, այսինքն՝ երկարաժամկետ հավասարակշռությունը նաև կայուն է: Համոզվելու համար դիտարկենք հետևյալ սցենարը. ենթադրենք՝ $u_{t-1} > 0$, ինչը նշանակում է, որ (4) մոդելի կանխատեսումը ցածր է $\ln(C_{t-1})$ -ի փաստացի արժեքից: Այդ դեպքում, համաձայն (5) հավասարման, ի պատասխան u_{t-1} -ի աճին՝ $\Delta \ln(C_t) = \ln(C_t) - \ln(C_{t-1})$ կարճաժամկետ նվազում՝ այդպիսով զսպելով էնդոգեն փոփոխականի փաստացի և մոդելային արժեքների տարամիտման գործընթացը և համակարգը վերադարձնելով հավասարակշիռ վիճակի:

2.5. Արդյունքները

2.2-րդ ենթաբաժնում արդեն նկարագրվել է կանխիկի պահանջարկի օգնությամբ ստվերային տնտեսության գնահատման մեթոդի էությունը: Այժմ անցնենք այդ մեթոդի պրակտիկ իրագործմանը՝ ունենալով $\ll$ տնտեսությունում կանխիկի պահանջարկի էմպիրիկ ֆունկցիան: (1)-(3) հավասարումների տրամաբանությամբ հաշվարկենք հետևյալ մեծությունները.

$$\hat{C}_t = \exp(-6.23 + 0.74 \ln(1 + T_t) - 0.04 \ln(R_t) + 1.30 \ln(GDP_t) + 0.68 \varepsilon_{t-4}), \quad (6)$$

$$\tilde{C}_t = \exp(-6.23 - 0.04 \ln(R_t) + 1.30 \ln(GDP_t) + 0.68 \varepsilon_{t-4}), \quad (7)$$

$$EC_t = \hat{C}_t - \tilde{C}_t: \quad (8)$$

EC_t -ն մոտարկում է տնտեսության ոչ ֆորմալ հատվածում շրջանառվող կանխիկի ծավալը: Այդ դեպքում $M_t - EC_t$ ցույց է տալիս փողի առաջարկը տնտեսության ֆորմալ հատվածում: Համաձայն փողի քանակական տեսության՝

$$Y_t^{informal} = EC_t \nu, \quad (9)$$

$$Y_t^{formal} = (M_t - EC_t) \nu, \quad (10)$$

որտեղ $Y_t^{informal}$ -ը ցույց է տալիս համախառն թողարկումը ոչ ֆորմալ տնտեսությունում, Y_t^{formal} -ը՝ ֆորմալ տնտեսությունում, իսկ ν -ն փողի շրջապտույտի արագությունն է: (9) և (10) բանաձևերից հետևում է, որ ստվերային տնտեսության գործակիցը կորոշվի հետևյալ բանաձևով.

$$SHADOW_t = \frac{Y_t^{informal}}{Y_t^{formal}} = \frac{EC_t}{M_t - EC_t}: \quad (11)$$


Նկատենք, որ (11) բանաձևը ենթադրում է, որ փողի շրջապտույտի արագությունը նույնն է ֆորմալ և ոչ ֆորմալ տնտեսություններում: Ահումադան, Ավարադոն և Քանավեզեն (Ahumada, Alvarado, Canavese 2006)⁴⁸ ցույց են տալիս, որ այս ենթադրությունը իրատեսական է, եթե $\gamma = 1$, որտեղ γ -ն իրական ՀՆԱ-ի գործակիցն է կանխիկի պահանջարկի բանաձևում: Հակառակ դեպքում (11) բանաձևը անհրաժեշտ է ճշգրտել հետևյալ կերպ.

⁴⁸ H. Ahumada, F. Alvarado, A. Canavese, The demand for currency approach and the size of the shadow economy: A critical assessment, Berkeley Program in Law and Economics, Working Paper Series, Paper n. 192, 2006, էջ 10-13:

$$SHADOW_t = \left(\frac{EC_t}{M_t - EC_t} \right)^{\frac{1}{\gamma}} \quad (12)$$

Մեր դեպքում, ըստ (4) մոդելի, $\gamma = 1.30$: Եռամսյակային տվյալների պարագայում նախքան (12) բանաձևի կիրառումը անհրաժեշտ է EC_t և M_t ժամանակային շարքերը անցկացնել Հոդրիք-Պրեսկոտի ֆիլտրի միջով՝ անցանկալի տատանումներից ձերբազատվելու նպատակով:


Գծապատկեր 2.2. Ստվերային տնտեսությունը ՀՀ-ում



Գծապատկեր 2.2-ը ցույց է տալիս, որ կախված ստվերային տնտեսության ծավալներից և դինամիկայից՝ կարելի է առանձնացնել 3 ժամանակաշրջան: Առաջին ժամանակաշրջանը, որը մեկնարկել է 2001-ի առաջին եռամսյակից և շարունակվել մինչև 2009-ի առաջին եռամսյակը, բնորոշվել է շոշափելի ստվերային տնտեսությամբ, որը կազմում էր ՀՆԱ-ի 55-65%-ը: Ընդ որում, պիկը արձանագրվել է 2004-ի առաջին եռամսյակում: Սակայն երկրորդ ժամանակաշրջանում՝ 2009-ի երկրորդ եռամսյակից մինչև 2016-ի երկրորդ եռամսյակը, ստվերային տնտեսության ծավալները էականորեն նվազել են՝ հասնելով ՀՆԱ-ի շուրջ 30%-ի: Նվազման միտումը շարունակվել է նաև 2016-ի կեսերից մեկնարկող երրորդ ժամանակաշրջանում՝ սակայն զգալիորեն ավելի դանդաղ տեմպերով: Մաթեմատիկորեն՝ երրորդ ժամանակաշրջանում կորի *գոգավորությունը* փոխակերպվել է *ուռուցիկության*, որը ունի ստորին սահման (ստորին ասիմպտոտ): Թվում է, թե այս ստորին սահմանը 25%-ի շրջակայքում է, թեև նման եզրահանգում կատարելու համար անհրաժեշտ է ավելի տևական ժամանակային հորիզոն, քան 3-4 տարին է: Իսկ դիտարկվող հորիզոնի պարագայում

կարող ենք միայն արձանագրել, որ ստվերը կայունացել է 27-28%-ի շրջակայքում, և դրա հաղթահարումը կառավարությունից պահանջելու է ավելի մեծ ջանքեր:

Գծապատկեր 2.3. Ֆորմալ և ոչ ֆորմալ ՀՆԱ-ն ՀՀ-ում



Գծապատկեր 2.3-ը ներկայացնում է ստվերային տնտեսության և ՀՆԱ-ի դինամիկան՝ բացարձակ մեծություններով: Ուշագրավ է, որ դիտարկվող ժամանակահատվածում ստվերային տնտեսության բացարձակ ծավալները, ի տարբերություն հարաբերականի, դրսևորել են համեմատաբար կայուն վարքագիծ: Մասնավորապես, ստվերային տնտեսություն/ՀՆԱ հարաբերակցության՝ 2009-2016թթ. միջակայքում արձանագրված շեշտակի նվազումը չի արտացոլվել ոչ ֆորմալ ՀՆԱ-ի բացարձակ մեծությունում, քանի որ հիմնականում պայմանավորված է եղել ՀՆԱ-ի (հայտարարի) աճով: Այս իմաստով ուշագրավ է, որ թեպետ ստվերային տնտեսության գործակիցը 2018-ին կազմել է ընդամենը 28%՝ 2001-ի 58%-ի դիմաց, նշված ժամանակահատվածում ստվերային շրջանառության բացարձակ ծավալները ավելացել են շուրջ 2.63 անգամ:

2.6. Եզրահանգումներ

Ստվերային տնտեսության ծավալների և դինամիկայի գնահատումը կարևոր է երկու տեսանկյունից: Առաջին՝ այն օգնում է հասկանալ, թե արդյոք նախընթաց ժամանակաշրջանում տնտեսական քաղաքականությունը զուգորդվել է ստվերային դաշտի կրճատմամբ, և որոնք են ստվերային տնտեսության զարգացման փուլերը և

ընթացիկ միտումները: Երկրորդ՝ իրավիճակի ախտորոշումը հուշում է, թե ինչպիսին պետք է լինի ստվերային տնտեսության ֆորմալացման ռազմավարությունը ապագայում:

Հաշվի առնելով այս խնդիրների կարևորությունը՝ 2-րդ բաժնում կառուցվել է ստվերային տնտեսության գնահատման տնտեսաչափական մոդել՝ հիմնված կանխիկի պահանջարկի մեթոդի վրա: Մոդելի հիմքում հետևյալ տրամաբանությունն է. բարձր հարկային բեռը այլ հավասար պայմաններում տնտեսավարողներին ուղղորդում է դեպի ոչ ֆորմալ դաշտ, որտեղ գործարքները տեղի են ունենում կանխիկով: Հետևաբար, ստվերային տնտեսության «հետքերը» պետք է փնտրել կանխիկ շրջանառության և հարկային բեռի փոխկախվածությունում: Ընդ որում, մոդելում ՀՀ տնտեսության հարկային բեռը, որը համակողմանիորեն վերլուծվել է 1-ին բաժնում, ներկայացվել է հարկեր/ՀՆԱ հարաբերակցության միջոցով:

Գնահատելով վերոհիշյալ մոդելը՝ ցույց է տրվել, որ դիտարկվող փոփոխականների, այն է՝ կանխիկ շրջանառության, հարկային բեռի, ավանդային տոկոսադրույքի և ՀՆԱ-ի միջև առկա է երկարաժամկետ, կայուն հավասարակշռություն: Ընդ որում, հարկային բեռի և ՀՆԱ-ի ազդեցությունը կանխիկ շրջանառության վրա դրական է, իսկ ավանդային տոկոսադրույքինը՝ բացասական: Հավասարակշռությունը երկարաժամկետ է, քանի որ համահունչ է տնտեսագիտության տեսությանը, և բացի այդ, համապատասխան մոդելի մնացորդները ստացիոնար են: Հավասարակշռությունը նաև կայուն է, քանի որ դրանից շեղումները միայն ժամանակավոր են, և մոդելը ինքնաբերաբար վերադառնում է կայուն վիճակի:


Հաշվարկների արդյունքում պարզվել է, որ ՀՀ ստվերային տնտեսությունը կազմում է ֆորմալ ՀՆԱ-ի շուրջ 27-28%-ը: Ընդ որում, այս մակարդակը ձևավորվել է ստվերային տնտեսության կրճատման՝ վերջին տասնամյակում արձանագրված բարձր տեմպերի արդյունքում: Իսկապես, եթե 2009-ի երրորդ եռամսյակում ստվերը կազմել է շուրջ 54%, ապա 2019-ի երրորդ եռամսյակում այն գնահատվել է ճիշտ 2 անգամ պակաս՝ շուրջ 27%: Մտահոգիչ է, սակայն, այն հանգամանքը, որ սկսած 2016-ի կեսերից՝ ստվերային տնտեսության կրճատման արագությունը էապես նվազել է: Ավելին, երկարաժամկետ հատվածում ստվերի համար նշմարվել է որոշակի ստորին սահման՝ 25%-ի շրջակայքում, որի հաղթահարումը կառավարությունից պահանջելու է ավելի մեծ ջանքեր:

3. ՍՏՎԵՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՖՈՐՄԱԼԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Ստվերային տնտեսության ֆորմալացման ռազմավարությունը մշակելիս անհրաժեշտ է առաջնորդվել տվյալ երկրի հարկային համակարգի և ոչ ֆորմալ գործունեության առանձնահատկություններով: ՀՀ տնտեսության հենց այս առանձնահատկությունների ուսումնասիրությանն էին նվիրված սույն վերլուծության նախորդ երկու բաժինները: Մասնավորապես, 1-ին բաժնում հիմնավորվել է, որ ստվերային տնտեսության տեսանկյունից խնդրահարույց են ՀՀ հարկային համակարգի հետևյալ պարամետրերը՝ հարկային ճեղքվածքների առկայությունը, աշխատուժի հարկման ռեգրեսիվությունը, հարկային ստուգումների որակը: 2-րդ բաժնում ստվերային տնտեսության գնահատման շրջանակներում ցույց է տրվել, որ վերոհիշյալ գործոններին պետք է ավելացնել ևս մեկը՝ կանխիկ շրջանառությունը, քանի որ ՀՀ-ում և, առհասարակ, երկրների մեծ մասում ոչ ֆորմալ գործարքները տեղի են ունենում կանխիկով:

Հաշվի առնելով վերոհիշյալը՝ ՀՀ-ում ստվերային տնտեսության դեմ պայքարը պետք է ընթանա երեք ուղղություններով՝ հարկային կանոնների վերանայում, հարկային վարչարարության մոդելի փոփոխություն և կանխիկ գործարքների սահմանափակումներ (Գծապատկեր 3.1):

Գծապատկեր 3.1. Ստվերային տնտեսության ֆորմալացման ռազմավարությունը ՀՀ-ում



Հարկային կանոնների վերանայումը ենթադրում է հարկային օրենսդրությունում, մասնավորապես՝ եկամտային հարկի սանդղակում, պրոգրեսիվության տարրերի ներմուծում: Պրոգրեսիվ հարկումը կատարում է երկու հիմնական գործառույթ: Առաջին՝ ինչպես արդեն նշվել է 1-ին բաժնում, այն կանխում է ստվերային տնտեսության ծավալների ընդլայնումը: Երկրորդ՝ պրոգրեսիվ հարկումը ծառայում է որպես *ինքնաշխատ կայունարար (automatic stabilizer)*, որը տնտեսական զարգացումներին հաղորդում է սահունություն⁴⁹: Ստացվում է, որ գործող հարկային կանոնների պատճառով ՀՀ բնակչությունը և տնտեսավարող սուբյեկտները գրկվել են վերոհիշյալ երկու մեխանիզմների ընձեռած հնարավորություններից:

Ստվերի ֆորմալացումը պահանջում է բարեփոխել հարկային վարչարարությունը, որը արդյունավետ չէ հարկային ստուգումների որակի տեսանկյունից: Միայն այն հանգամանքը, որ ՀՀ-ում հարկային ստուգումները ունեն փոքր ազդեցություն տնտեսավարող սուբյեկտների՝ հարկերից խուսափման ծավալների վրա, վկայում է այն մասին, որ հարկային վարչարարության գործող մոդելում առկա են էական բացթողումներ: Նկատենք նաև, որ հարկային ճեղքվածքների խնդիրը ևս պետք է դիտարկել հարկային վարչարարության մոդելի փոփոխության համատեքստում, քանի որ հարկերի հավաքագրման մակարդակը անմիջականորեն կախված է հարկային ստուգումների որակից:

Ստվերային տնտեսության ֆորմալացման ռազմավարության երրորդ ուղղությունը կանխիկ գործարքների սահմանափակումներն են: 2-րդ բաժնում նկարագրված մոդելը ցույց է տվել, որ կանխիկը ստվերային շրջանառության դրսևորումներից է, և նրա աճը վկայում է ոչ ֆորմալ տնտեսության ծավալների ընդլայնման մասին: Վերջինս իր հերթին կարող է կապված լինել, օրինակ, հարկային բեռի ավելացման հետ: Պարզ է, որ կանխիկ գործարքների սահմանափակումների պայմաններում տնտեսավարող սուբյեկտները ստիպված կլինեն դիմել անկանխիկ վճարումներին, որոնք ամբողջությամբ «տեսանելի» են պետության համար:

3-րդ բաժինը կառուցվել է հետևյալ տրամաբանությամբ: 3.1-ին ենթաբաժնում հիմնավորվել է հարկային կանոնների, ինչպես նաև հարկային կանոններին հետևելու ծախսերի օպտիմալացման անհրաժեշտությունը ՀՀ-ում: 3.2-րդ ենթաբաժնում նկարագրվել է հարկային վարչարարության արևմտյան, այն է՝ ստվերի

⁴⁹ Այս մեխանիզմը աշխատում է հետևյալ կերպ. տնտեսական ռեցեսիայի փուլում նվազում են հարկատուների եկամուտները, ինչի արդյունքում նրանք հայտնվում են ավելի ցածր հարկադրույքների տիրույթում: Սա նշանակում է, որ այլ հավասար պայմաններում նվազում է տնտեսության հարկային բեռը, ինչն էլ զսպում է ռեցեսիան: Նույն մեխանիզմը կանխում է «գերտաքացումը» տնտեսական «վերելքի» փուլում:

Ֆորմալացմանը միտված մոդելի էությունը: 3.3-րդ ենթաբաժնում ուսումնասիրվել է կանխիկ գործարքների սահմանափակումների եվրոպական փորձը, ինչպես նաև ձևակերպվել են այն նախապայմանները, որոնք անհրաժեշտ են ՀՀ-ում անկանխիկ վճարումների մշակույթի կայացման համար: Վերջապես, 3.4-րդ ենթաբաժնում ամփոփվել են նախորդ ենթաբաժինների հիմնական արդյունքները, և կատարվել են եզրահանգումներ:

3.1. Հարկային կանոնների վերանայում

Հետազոտությունները ցույց են տալիս, որ ուղղակի և անուղղակի տնտեսական կորուստները, որոնք առաջանում են անարդյունավետ հարկային կանոնների պատճառով, ուղիղ համեմատական են հարկային դրույքաչափերին: Իսկապես, բարձր հարկադրույքները հարկատուների վարքագծում առաջացնում են «խեղումներ»՝ տնտեսական գործընթացները շեղելով զարգացման ցանկալի հետագծից⁵⁰: Խնդիրն այն է, որ երբ հարկադրույքները գերազանցում են որոշակի կրիտիկական շեմ, դրանց հետագա աճը հանգեցնում է պետական եկամուտների նվազման, քանի որ այլ հավասար պայմաններում կրճատվում է հարկման բազան⁵¹: Այլ կերպ ասած՝ այսպիսի դեպքերում հարկային դրույքաչափերի բարձրացումը չի ծառայում իր նպատակին այն իմաստով, որ պետական բյուջեի եկամտային մասի վրա ունենում է բացասական ազդեցություն:

Սակայն ինչպես արդեն ցույց է տրվել 1-ին բաժնում, ՀՀ-ում ստվերային տնտեսության առաջացման պատճառը ոչ այնքան հարկադրույքներն են, որքան հարկային վարչարարության ցածր որակը և հարկային կանոնների անբավարար պրոգրեսիվությունը: Վերջինս դրսևորվում է հատկապես աշխատուժի հարկման ասպարեզում:

Ռեգրեսիվ կանոնների բացասական ազդեցությունը վճռորոշ է տնտեսության՝ աշխատուժի վրա հիմնված ճյուղերի համար: Այդպիսին է, օրինակ, ծառայությունների ոլորտը: Հաշվի առնելով, որ վերջինս ՀՀ տնտեսական աճի առանցքային գործոններից է՝ պարզ է դառնում, որ ՀՀ-ում աշխատուժի ռեգրեսիվ հարկումը ունի էական զսպող ազդեցություն տնտեսական ակտիվության համար:

⁵⁰ ա) A. Gerritsen, Optimal taxation when people do not maximize well-being, Journal of Public Economics, Vol.144, 2016, էջ 122-139:

բ) L. Kaplow, Tax and non-tax distortions, Journal of Public Economics, Vol. 68, No. 2, 1998, էջ 303-306:

⁵¹ Այս օրինաչափությունը հայտնի է որպես *Լաֆերի կոր*՝ ի պատիվ ամերիկացի տնտեսագետ Արթուր Լաֆերի:

Այդ պատճառով հիմնական հետևությունը՝ կապված հարկային կանոնների օպտիմալացման հետ, հետևյալն է. անհրաժեշտ է անցում կատարել պրոգրեսիվ հարկման՝ միաժամանակ նվազագույնի հասցնելով հարկային բեռը ցածր աշխատավարձերի տիրույթում: Այստեղ զերծ կմնանք կոնկրետ դրույքաչափերի նախանշումից՝ ելնելով նաև նրանից, որ գոյություն ունեն մեկից ավելի օպտիմալ սանդղակներ: Նշենք միայն, որ ցածր վարձատրվող աշխատանքների հարկումը հնարավոր է էապես նվազեցնել մի քանի այլընտրանքային եղանակներով:

Առաջին՝ կարելի է սահմանել աշխատավարձի չհարկվող շեմ, օրինակ՝ նվազագույն աշխատավարձի չափով: Այդ դեպքում անհատը, ով ստանում է, դիցուք, 130,000 դրամ աշխատավարձ, պարտավոր է վճարել եկամտային հարկ միայն 130,000-ի և նվազագույն աշխատավարձի տարբերության հաշվով: Այսպիսի պրակտիկա կիրառվում է եվրոպական երկրների մեծ մասում:

Երկրորդ՝ Գերմանիայի հաջողված օրինակով հարկային օրենսդրությունում կարելի է ներմուծել ցածր աշխատավարձեր ենթադրող «մինի աշխատանք» և «միդի աշխատանք» հասկացությունները և դրանց համար սահմանել արտոնյալ հարկային ռեժիմ⁵²: Նպատակն է բացառել, որ ցածր աշխատավարձ ստացողները հայտնվեն աղքատության ծուղակում: Բացի այդ, այս գործիքը խրախուսում է «մինի աշխատանք» ունեցողների անցումը ստանդարտ զբաղվածության:

Երրորդ՝ սեզոնային աշխատողների պարագայում, ովքեր գործունեություն են ծավալում գյուղատնտեսության, զբոսաշրջության և այլ սեզոնային ոլորտներում, կարելի է կիրառել Մոնտենեգրոյի փորձը, երբ գործատուները յուրաքանչյուր սեզոնային աշխատողի հաշվով վճարում են օրական ֆիքսված գումար⁵³:

Անդրադառնանք նաև *հարկային կանոններին հետևելու ծախսերի (tax compliance cost)* օպտիմալացմանը: Ինչպես գիտենք, իր գործունեությունը հարկային կանոններին համապատասխանեցնելու համար յուրաքանչյուր կազմակերպություն, որպես կանոն, հարկադրված է կատարել որոշակի ծախսեր: Այդ ծախսերի մի մասը բացահայտ է և ենթադրում է ֆինանսական ելքեր (օրինակ՝ հարկային հաշվապահության պատշաճ կազմակերպում), իսկ մյուս մասը անբացահայտ է և դրսևորվում է չստացված եկամուտների տեսքով (օրինակ՝ ժամանակի կորուստ):

⁵² Mini- and midi-jobs in Germany: effects of marginal employment on unemployment, FORES Policy Paper 2015:3, 2015, էջ 16-37:

⁵³ G. Kristic, F. Schneider, նշված աշխատանքը, էջ 142-143:

Հարկային կանոններին հետևելու ծախսերի բարձր մակարդակը հարկատուներին «ստիպում է» մտածել ստվերային դաշտ տեղափոխվելու մասին:

Հարկային կանոններին հետևելու ծախսերը աճում են այն դեպքերում, երբ⁵⁴

- ավելանում է հարկատեսակների թվաքանակը,
- ավելանում է տարեկան վճարումների թվաքանակը,
- սահմանափակվում են էլեկտրոնային վճարումների հնարավորությունները,
- հարկային կարգավորումներում տեղ են գտնում խրթին և ոչ հստակ ձևակերպումներ:

ՀՀ-ում վերոհիշյալ գործոններից առավել խնդրահարույց է չորրորդը: Որոշ մասնագետներ նկատում են, որ հարկային օրենսդրության ձևակերպումները խրթին են, քանի որ կոչված են լինելու *համապարփակ*, այսինքն՝ ներառելու բոլոր հնարավոր դեպքերը, որ առնչվում են հարկատուների վարքագծի հետ: Ակնհայտ է, սակայն, որ համապարփակ լինելը իրավական նորմի պահանջվող հայտանիշներից միայն մեկն է: Նվազ կարևոր չէ վերջինիս *հստակությունը*, որը ենթադրում է, որ հարկային կանոնները տնտեսավարողների համար պետք է լինեն հասկանալի և կանխատեսելի: Նկատենք, որ երկրորդ սկզբունքը համատեղելի է առաջինի հետ: Ուստի անհրաժեշտ է վերանայել հարկային կարգավորումների ձևակերպումները՝ շարադրանքը դարձնելով ավելի հստակ և պարզ:

Այսպիսով, աշխատուժի հարկումը դարձնելով պրոգրեսիվ՝ հնարավոր է խթանել ամբողջական պահանջարկը և նպաստել ստվերային տնտեսության ֆորմալացմանը: Ինչ վերաբերում է հարկային կանոններին հետևելու ծախսերի օպտիմալացմանը, ապա այն լուծում է երկու խնդիր: Առաջին՝ նվազեցնել հարկային բեռը փոքր և միջին ձեռնարկությունների համար, որոնք ցածր եկամուտների բերումով առավել զգայուն են այսպիսի ծախսերի նկատմամբ: Երկրորդ՝ ստեղծել պայմաններ, որ ՀՀ գործարար միջավայրը օտարերկրյա ներդրողների համար դառնա առավել ընկալելի և գրավիչ:

3.2. Հարկային վարչարարության մոդելի փոփոխություն

ՀՀ-ում հարկային վարչարարության պրակտիկան կարիք ունի էական բարեփոխումների: Ընդ որում, անհրաժեշտ բարեփոխումները կարելի է բաժանել երկու խմբի: Առաջին խումբը ներառում է հարկային վարչարարության մոդելի ֆունկցիոնալ բարելավումները, որոնք արդեն նկարագրվել են 1-ին բաժնում: Այսպես,

⁵⁴ J. Harju, T. Matikka, T. Rauhanen, Compliance costs vs. tax incentives: Why do entrepreneurs respond to size-based regulations? Journal of Public Economics, Vol. 173, 2019, էջ 139-164:

ՀՀ-ում հարկային ստուգումների արդյունավետությունը բարելավելու նպատակով անհրաժեշտ է բարձրացնել հարկային մարմինների աշխատակիցների որակավորումը, բացառել կոռուպցիոն ռիսկերը, կատարելագործել տնտեսավարող սուբյեկտների ռիսկայնության գնահատման համակարգը:

Բարեփոխումների երկրորդ խումբը վերաբերում է հարկային վարչարարության մոդելի ռազմավարության փոփոխությանը, որն անհրաժեշտություն է հատկապես հետխորհրդային երկրների համար: Այս երկրներում հարկային ստուգումները որպես կանոն հանգեցնում են ոչ ֆորմալ դաշտում գործող ընկերությունների լուծարմանը այն դեպքում, երբ անհրաժեշտ է խրախուսել տնտեսավարողների տեղաշարժը դեպի ֆորմալ դաշտ: ՀՀ-ն հարկային վարչարարության այս մոդելը, որն ակնհայտորեն համատեղելի չէ շուկայական տնտեսության կանոնների հետ, ժառանգել է Խորհրդային Միությունից:

Խնդիրն այն է, որ համաձայն բազմաթիվ ուսումնասիրությունների՝ եթե ստվերի ֆորմալացման ռազմավարությունը սահմանափակվում է միայն հարկային ստուգումներով և դրանցից բխող տույժերով և տուգանքներով, ապա ժամանակի ընթացքում ստվերային տնտեսության դեմ պայքարը հանգում է հետևյալ պարզ «վարժությանը»։ Կանխել տնտեսավարողների մուտքը ոչ ֆորմալ տնտեսություն կամ հայտնաբերել և լուծարել ստվերում գործողներին⁵⁵: Արդյունքում, սակայն, ստվերային տնտեսության ծավալների կրճատումը չի ուղեկցվում ֆորմալ տնտեսության ծավալների համարժեք աճով:

Մյուս կողմից, հանրային ֆինանսների տեսությունը և զարգացած երկրների փորձը փաստում են, որ ստվերի ֆորմալացման ռազմավարությունը առաջին հերթին պետք է միտված լինի ապահովելու տնտեսավարողների «սահուն» տեղաշարժը ստվերից դեպի ֆորմալ տնտեսություն⁵⁶: Այս ճանապարհով է, որ հնարավոր է հասնել համախառն ներքին արդյունքի և հարկային եկամուտների աճի՝ նախադրյալներ

⁵⁵ C. Williams, Small business in the informal economy: making the transition to the formal economy, Small Business Service, London, 2005, էջ 24-43:

G. Kristic, F. Schneider, նշված աշխատանքը, էջ 129-131:

⁵⁶ ա) M. Reza Farzanegan, M. Hassan, A. Mohamed Badreldin, Economic liberalization in Egypt: A way to reduce the shadow economy? Journal of Policy Modeling, Vol. 42, No. 2, 2020, էջ 307-327:

բ) N. Benhassine, D. McKenzie, V. Pouliquen, M. Santini, Does inducing informal firms to formalize make sense? Experimental evidence from Benin, Journal of Public Economics, Vol. 157, 2018, էջ 1-14:

գ) L. Alfonso Dau, A. Cuervo-Cazurra, To formalize or not to formalize: Entrepreneurship and pro-market institutions, Journal of Business Venturing, Vol. 29, No. 5, 2014, էջ 668-686:

դ) A. Demenet, M. Razafindrakoto, F. Roubaud, Do Informal Businesses Gain from Registration and How? Panel Data Evidence from Vietnam, World Development, Vol. 84, 2016, էջ 326-341:

ստեղծելով բնակչության կենսամակարդակի բարելավման համար: Կարծում ենք՝ ստվերի դեմ պայքարի՝ ՀՀ-ում կիրառվող մեթոդները անհրաժեշտ է կատարելագործել՝ ելնելով այս գաղափարից և դրանից բխող գործառույթներից:

Հարկային վարչարարության խորհրդային և արևմտյան մոդելների տարբերությունը հասկանալու համար օգտակար է հարկերից խուսափումը դիտարկել որպես ռացիոնալ որոշում, որ կայացնում է հարկատուն՝ կախված ակնկալվող օգուտների և կորուստների հարաբերակցությունից: Այս պարագայում ակնհայտ է դառնում, որ հարկերից խուսափման ծավալները հնարավոր է սահմանափակել ստվերային գործունեության օգուտները կրճատելու և կորուստները ավելացնելու ճանապարհով: Ինչպես արդեն նշվել է 1-ին բաժնի նախաբանում, սա կարելի է իրականացնել հարկային վարչարարության օգնությամբ:

Հարկային վարչարարության խորհրդային մոդելը տնտեսավարողի՝ հարկերից խուսափման որոշման վրա ներազդում է հետևյալ կերպ. այն ավելացնում է ստվերային գործունեությանը առնչվող կորուստները: Այլընտրանքային ռազմավարությունը, որը հարկային վերահսկողությանը զուգահեռ նպաստում է տնտեսավարողների շրջանում օրինապահ վարքագծի ձևավորմանը, նույն արդյունքին հասնում է մեկ այլ՝ ավելի արդյունավետ ճանապարհով. այն ավելացնում է օգուտները, որ հնարավոր է ստանալ՝ գործելով «սպիտակ դաշտում»: Այդ օգուտներից են վարկային ռեսուրսների և դրամաշնորհների հասանելիությունը, տեխնոլոգիաների մատչելիությունը, արդար մրցակցությունը, կառավարության հասցեական օժանդակությունը՝ ճգնաժամային պայմաններում, և այլն:

3.3. Կանխիկ գործարքների սահմանափակումներ

Ստվերային գործարքները կատարվում են կանխիկ փողով, քանի որ անկանխիկ վճարումները, որոնք հիմնված են էլեկտրոնային փողի վրա, գտնվում են կառավարության և կենտրոնական բանկի վերահսկողության տիրույթում: Հետևաբար, ստվերային շրջանառության ֆորմավացումը ենթադրում է պայքար կանխիկ շրջանառության դեմ, որը հնարավոր է իրագործել երկու ուղղություններով: Առաջին՝ սահմանել առավելագույն թույլատրելի շեմ կանխիկ վճարումների համար և երկրորդ՝ խրախուսել նանկանխիկ վճարումների ինստիտուտի ձևավորումը տնտեսական հարաբերություններում:

Նախ դիտարկենք կանխիկ շրջանառության դեմ պայքարի առաջին ուղղությունը: Նշենք, որ Եվրոպական Միության (ԵՄ) մակարդակում գոյություն չունի որևէ օրենսդրական կարգավորում, որով ուղղակիորեն կսահմանափակվեին կանխիկ

գործարքները: Ազգային օրենսդրությունների մակարդակում, սակայն, նման սահմանափակումներ նախատեսված են ԵՄ երկրների մեծ մասում: 2017-ի սեպտեմբերի դրությամբ կանխիկի սահմանափակումներով երկրների թվաքանակը ԵՄ-ում կազմում է 17: Համեմատության համար նշենք, որ 2008-ին այս ցուցանիշը 4 էր⁵⁷:

ԵՄ-ում կանխիկ վճարումների սահմանափակումները տարբերվում են երկրից երկիր: Որոշ երկրներում կանխիկի սահմանաչափը⁵⁸ վերաբերում է միայն այն գործարքներին, որոնց մասնակցում են ֆինանսական ինստիտուտներ: Այլ երկրներում այդ շեմը տարածվում է նաև մանրածախ առևտրի կետերից կատարվող գնումների վրա: Աբստրահվելով այդ տեղային առանձնահատկություններից՝ ներկայացնենք որոշ տվյալներ եվրոպական երկրների պրակտիկայից:

Կանխիկի սահմանաչափերը տատանվում են 500 եվրոյից (Հունաստան) և 1,000 եվրոյից (Ֆրանսիա) մինչև 13,800 եվրո (Խորվաթիա) և 15,000 եվրո (Լեհաստան): Հունաստանում այսպիսի խիստ կարգավորում սահմանվել է սուվերեն պարտքի ճգնաժամի տարիներին բանկային համակարգի անկումը կանխելու նպատակով: Նշենք նաև, որ Նիդեռլանդները միակ երկիրն է, որտեղ գործում է կանխիկ վճարումների հայտարարագրման պահանջ (2,000 եվրո՝ փոխանցումների դեպքում, 25,000 եվրո՝ մեքենաների վաճառքի դեպքում և այլն)⁵⁹:

ԵՄ որոշ երկրներում տնտեսական գործունեության մի շարք տեսակներ ազատված են կանխիկի սահմանափակումներից: Օրինակ՝ Դանիայում սահմանաչափերը չեն կիրառվում բանկերի և իրավաբանական գրասենյակների նկատմամբ: Իսկ որոշ երկրներում գործում են առավել խիստ իրավակարգավորումներ տնտեսության առանձին ոլորտների պարագայում: Այսպես, կանխիկ գործարքները ամբողջությամբ արգելված են Բելգիայի անշարժ գույքի շուկայում⁶⁰:

Ֆրանսիայում, Իսպանիայում և Իտալիայում ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների նկատմամբ կիրառվում է տարբերակված մոտեցում: Ֆրանսիայում և Իսպանիայում ոչ ռեզիդենտներին թույլատրվում է իրականացնել կանխիկ գործարքներ գումարային ավելի լայն միջակայքում՝ ընդհուպ մինչև 15,000 եվրոյի չափով: Իսկ Իտալիայում

⁵⁷ Ecorys, CEPS, Study on an EU initiative for a restriction on payments in cash, Report for the European Commission, 2017, էջ 23-26:

⁵⁸ Այստեղ սահմանաչափը ներկայացնում է այն գումարը, որից բարձր արժեքով գործարքները պետք է իրականացվեն անկանխիկ եղանակով:

⁵⁹ Ecorys, CEPS, նշված աշխատանքը, էջ 26-27:

⁶⁰ Նույն տեղում, էջ 27-28:

կանխիկի սահմանաչափերը չեն տարածվում ոչ ռեզիդենտների վրա⁶¹: Նշենք նաև, որ Իտալիայում օրենսդրության մակարդակում առանձնահատուկ խիստ վերաբերմունք է ցուցաբերվում *մասնագիտացված ծառայությունների* դիմաց վճարվող կանխիկի համար: Մասնավորապես, գործում է օրենք՝ Decreto Bersani անվանումով, որը այդպիսի ծառայությունների ձեռքբերման համար նախատեսում է կանխիկի 100 եվրո սահմանաչափ^{62,63}:

Անցնելով կանխիկ շրջանառության դեմ պայքարի երկրորդ ուղղությանը՝ արձանագրենք, որ անկանխիկ վճարումների մշակույթի ձևավորումը կախված է գործարքի կողմերի վարքագծից: Իսկապես, եթե գործարքը չի գերազանցում կանխիկ վճարումների թույլատրելի սահմանաչափը, ապա այն կարող է սպասարկվել անկանխիկ եղանակով միայն կողմերի փոխադարձ համաձայնության պարագայում: Հասկանալի է, որ կառավարության՝ գործարքի կողմերի կամքի և որոշումների վրա ներազդելու լծակները խիստ սահմանափակ են: Սակայն կառավարությունը կարող է ապահովել երկու նախադրյալ՝ չեզոքացնելու էլեկտրոնային գործարքների խոչընդոտները ՀՀ-ում:

Տնտեսավարողների (աշխատանքներ կատարող, ծառայություններ մատուցող, ապրանքեր վաճառող սուբյեկտների) մասով կառավարությունը կարող է պարտադրել վճարային քարտեր ընդունող սարքերի (POS տերմինալների) առկայությունը^{64,65}: Իսկ սպառողների մասով կառավարությունը պետք է նվազագույնի հասցնի չափահաս բնակչության՝ բանկային հաշիներով չապահովված հատվածի մասնաբաժինը: Նշենք նաև, որ զարգացած և զարգացող երկրների տարբերությունը՝ ըստ այս վերջին հայտանիշի, բավական շոշափելի է. եթե 2017-ի տվյալներով զարգացած երկրներում բանկային հաշի ունի չափահաս բնակչության 94%-ը, ապա զարգացող երկրներում այս ցուցանիշը կազմում է ընդամենը 63%⁶⁶: Աղյուսակ 3.1-ում Հայաստանը

⁶¹ Նույն տեղում:

⁶² G. Kristic, F. Schneider, նշված աշխատանքը, էջ 148-149:

⁶³ Բացի այդ, ըստ նույն օրենքի՝ այն մանրածախ առևտրի կետը, որի մասով հայտնաբերվում է 5 տարիների ընթացքում ՀԴՄ կտրոն չտրամադրելու գոնե 3 դեպք, կարող է ենթարկվել հարկադիր լուծարման: Նույն ճակատագրին կարող է արժանանալ շինարարական կազմակերպությունը, որը ունի չգրանցված աշխատողներ:

⁶⁴ Գաղտնիք չէ, որ նման սարքերի բացակայությունը ներկայումս լուրջ անհարմարություններ է պատճառում այն սպառողներին, ովքեր նախընտրում են անկանխիկ վճարումները:

⁶⁵ ՀՀ կենտրոնական բանկը 2019-ի սեպտեմբերի 18-ին հանրային քննարկման է ներկայացրել մի օրինագիծ, որը մասամբ կարգավորում է այս խնդիրը, տե՛ս <https://www.e-draft.am/projects/1950> (այցելվել է 15.05.2020թ.):

⁶⁶ A. Demirguc-Kunt, L. Klapper, D. Singer, S. Ansar, J. Hess, The Global Findex Database 2017: Measuring Financial Inclusion and the Fintech Revolution, World Bank Group, 2018, էջ 18:

համեմատվում է Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի մի շարք երկրների հետ՝ ելնելով չափահաս բնակչության՝ բանկային հաշիվներով ապահովվածությունից:

Աղյուսակ 3.1. Բանկային հաշիվ ունեցող բնակչության մասնաբաժինը, տոկոս չափահաս բնակչության կազմում⁶⁷

Երկիր	2011	2014	2017
Ադրբեջան	14.90	29.15	28.57
Բելառուս	58.60	71.98	81.16
Էստոնիա	96.82	97.67	97.99
Թուրքիա	57.60	56.68	68.59
Լատվիա	89.66	90.22	93.22
Լեհաստան	70.19	77.86	86.73
Լիտվա	73.76	77.91	82.88
Հայաստան	17.49	17.67	47.76
Հունգարիա	72.67	72.26	74.94
Ղազախստան	42.11	53.91	58.70
Ղրղզստան	3.76	18.47	39.94
Չեխիա	80.65	82.18	80.99
Ռուսաստան	48.18	67.38	75.76
Սլովակիա	79.58	77.24	84.18
Սլովենիա	97.14	97.24	97.53
Վրաստան	32.98	39.67	61.23

Աղյուսակ 3.1-ից երևում է, որ 2014-2017թթ. ՀՀ-ն արձանագրել է շեշտակի առաջընթաց ֆինանսական ներառականության առումով: Այսպես, բանկային հաշիվ ունեցող անձանց մասնաբաժինը չափահաս բնակչության կազմում աճել է ավելի քան 2.70 անգամ: Նշված ժամանակաշրջանում նման տեմպ չի գրանցվել Աղյուսակ 3.1-ում դիտարկված երկրներից և ոչ մեկում: Այս ցուցանիշը տպավորիչ է նաև ՀՀ-ի՝ նախորդող ժամանակաշրջանի զարգացումների համեմատ: Իսկապես, 2011-2014թթ. բանկային հաշիվ ունեցող անձանց մասնաբաժինը չափահաս բնակչության կազմում աճել է ընդամենը 1.01 անգամ՝ 0.18 տոկոսային կետով:

Այդուհանդերձ, չնայած այս էական առաջընթացին՝ ՀՀ-ն 2017-ի դրությամբ ֆինանսական ներառականության վերոհիշյալ ցուցանիշով զգալիորեն զիջում է Թուրքիային (68.59%) և Վրաստանին (61.23%): Թեև 2020-ի տվյալները դեռևս

⁶⁷ Տվյալների աղբյուրը՝ World Bank Group, The Global Findex Database 2017: Measuring Financial Inclusion and the Fintech Revolution, Data, Chapter 1, <https://bit.ly/3c1wGml> (այցելվել է 04.05.2020թ.):

հասանելի չեն, սակայն, հիմնվելով Աղյուսակ 3.1-ում ամփոփված տեղեկատվության վրա, կարող ենք եզրակացնել, որ ՀՀ-ում բանկային ծառայությունների հասանելիության բարձրացման խնդիրը արդիական է նաև այսօր: Այն պահանջում է պետական միջամտություն առևտրային բանկերի և հասարակության նվազ ապահովված շերտերի հարաբերություններում՝ նկատի ունենալով այն, որ ֆինանսական ներառականության մակարդակը ցածր է հատկապես աղքատ բնակչության շրջանում:

Այսպիսով, եվրոպական երկրների փորձը վկայում է, որ կանխիկ վճարումների առավելագույն սահմանաչափերի կիրարկումը արդյունավետ գործիք է ստվերային տնտեսության դեմ պայքարի համատեքստում: Սակայն այն բավարար չէ երկրում անկանխիկ վճարումների ինստիտուտի կայացման համար: Անհրաժեշտ է ներդնել նաև օրենսդրական մեխանիզմներ՝ տնտեսավարողների շրջանում վճարային քարտեր ընդունող սարքերի առկայությունը պարտադրելու, ինչպես նաև չափահաս բնակչության՝ բանկային հաշիներով չապահովված հատվածի մասնաբաժինը մինիմալացնելու համար:

3.4. Եզրահանգումներ

ՀՀ ստվերային տնտեսության ֆորմալացման ռազմավարությունը մշակելիս անհրաժեշտ է թիրախավորել հետևյալ 4 խնդիրները՝

- ա) աշխատուժի ռեգրեսիվ հարկում,
- բ) հարկային ճեղքվածքներ,
- գ) հարկային ստուգումների ցածր որակ,
- դ) կանխիկ շրջանառության մեծ ծավալներ:

Սույն վերլուծությունում «ա» խնդիրը դիտարկվել է հարկային կանոնների վերանայման, «բ» և «գ» խնդիրները՝ հարկային վարչարարության մոդելի փոփոխության, «դ» խնդիրը՝ կանխիկ գործարքների սահմանափակումների համատեքստում: Անդրադառնանք այն եզրահանգումներին, որոնք բխում են տնտեսական քաղաքականության այս երեք ուղղությունների վերլուծությունից:

Տնտեսագետները համակարծիք են այն հարցում, որ աշխատուժի ռեգրեսիվ հարկումը բացասաբար է անդրադառնում հարկատուների մոտիվացիայի վրա: Այս խնդրի կարգավորումը, այն է՝ հարկման պրոգրեսիվ կանոնների հաստատումը, արդիական է հատկապես այն երկրների համար, որոնց տնտեսական զարգացումը էապես կախված է աշխատուժի վրա հիմնված ճյուղերից: ՀՀ-ում 2019-ի տնտեսական աճին ամենամեծ նպաստումը ունեցող ճյուղը եղել է ծառայությունների ոլորտը, որի

միջոցով ապահովվել է 7.6% տնտեսական աճի 5.3 տոկոսային կետը⁶⁸: Քանի որ ՀՀ ծառայությունների ոլորտում աշխատուժ-կապիտալ հարաբերակցությունը հոգուտ առաջինի է, ռեգրեսիվ եկամտային հարկը ունի զսպող ազդեցություն ոլորտի արտադրողականության վրա: Հետևաբար, հարկային կանոնների վերանայումը և հարկային համակարգում պրոգրեսիվության տարրերի ներմուծումը անհրաժեշտություն է նաև ՀՀ պարագայում:

Հարկային վարչարարության մոդելի ֆունկցիոնալ բարեփոխումները անհրաժեշտ են, բայց ոչ բավարար հարկային ճեղքվածքները հաղթահարելու և հարկային ստուգումների արդյունավետությունը բարձրացնելու համար: Այստեղ խնդիրները առավել խորքային են և պահանջում են մոդելի ռազմավարության արդիականացում՝ արևմտյան առաջադեմ փորձին համահունչ: Մասնավորապես, պետք է վերլուծել ՀՀ տնտեսավարողների՝ ստվերային դաշտում գործելու պատճառները և ստեղծել մեխանիզմներ, որպեսզի ֆորմալ գործունեությունը նրանց համար դառնա ավելի գրավիչ: Այդ նպատակով անհրաժեշտ է մեծացնել վարկային ռեսուրսների ու դրամաշնորհների հասանելիությունը և տեխնոլոգիաների մատչելիությունը, ստեղծել տնտեսական վեճերի հանգուցալուծման արդար և կանխատեսելի գործիքներ և այլն:

Ստվերային տնտեսության ֆորմալացման ուղղություններից են նաև կանխիկ գործարքների սահմանափակումները: ՀՀ պարագայում տեղին է դիտարկել կանխիկ վճարումների առավելագույն շեմերի սահմանման հնարավորությունը, որոնց ներքո «թանկ» գործարքները կիրականացվեն միայն անկանխիկ եղանակով: Ընդ որում, կանխիկի սահմանաչափերը և համապատասխան օրենսդրական կարգավորման մյուս դրույթները նախագծելիս օգտակար կլինի հաշվի առնել ԵՄ երկրների հարուստ փորձը: Բացի այդ, անհրաժեշտ է ձեռնարկել քայլեր ՀՀ-ում անկանխիկ վճարումների մշակույթի տարածման, ինչպես նաև նաև չափահաս բնակչության՝ բանկային հաշիվներով չապահովված հատվածի կրճատման համար: Այս միջոցառումները կարող են նոր լիցքեր հաղորդել ստվերային տնտեսության ֆորմալացման գործընթացին, ինչպես նաև նպաստել ՀՆԱ-ի և հարկային եկամուտների աճին:

⁶⁸ «Լոյս» հիմնադրամ, «Տնտեսական հեղափոխության» 2019 թվականի արդյունքները, 27.02.2020, էջ 2-3, <https://bit.ly/3dNmDC3> (այցելվել է 15.05.2020թ.):

ԱՄՓՈՓՈՒՄ

Համաձայն սույն վերլուծությունում իրականացված հաշվարկների՝ ՀՀ-ում ստվերայնության մակարդակը կազմում է 27-28%: Ընդ որում, հարկային համակարգը ունեցել է էական ազդեցություն ստվերային շրջանառության ձևավորման համատեքստում: Այս մասին է վկայում վիճակագրորեն նշանակալի կախվածությունը, որ բացահայտվել է կանխիկ շրջանառության և հարկեր/ՀՆԱ հարաբերակցության միջև: ՀՀ հարկային համակարգի առանձին պարամետրերի և ստվերային տնտեսության փոխազդեցությանը անդրադառնանք մի փոքր ավելի մանրամասն:

- Անհրաժեշտ է արձանագրել, որ ՀՀ տնտեսության հարկային բեռը հարկեր/ՀՆԱ հարաբերակցության, ինչպես նաև ԱԱՀ-ի և շահութահարկի *դրույքաչափերի* տեսանկյունից, ընդհանուր առմամբ, չափավոր է: Այդուհանդերձ, ԱԱՀ-ի և շահութահարկի *փաստացի հավաքագրումները* չեն համապատասխանում այդ *դրույքաչափերին* այն իմաստով, որ հարկերը հավաքագրվում են ավելի քիչ, քան այն մակարդակը, որը պետք է ձևավորվեր հարկադրույքների և, առհասարակ, հարկային կանոնների պատշաճ կիրարկման պարագայում: Այլ կերպ ասած՝ առկա են հարկային ճեղքվածքներ, որոնք վկայում են դե յուրե և դե ֆակտո հարկային կանոնների տարամիտման մասին: Հարկային ճեղքվածքները ներկայացնում են պետական բյուջեի այն պոտենցիալ եկամուտները, որոնք փոշիանում են ստվերային դաշտում:
- Հարկային սեպի հաշվարկը մատնանշում է, որ ՀՀ-ում աշխատանքային ռեսուրսների հարկումը պրոգրեսիվ չէ: Այս հանգամանքը ներազդում է ստվերային գործունեության վրա հետևյալ տրամաբանությամբ. ռեգրեսիվ հարկեր $\Rightarrow$ եկամուտների անհավասարության աճ $\Rightarrow$ ամբողջական պահանջարկի նվազում $\Rightarrow$ բիզնեսների շահութաբերության նվազում $\Rightarrow$ հարկերից խուսափում $\Rightarrow$ ստվերային գործունեության ընդլայնում: Վերլուծությունը նաև ցույց է տալիս, որ աշխատուժի հարկումը կարող է լինել ռեգրեսիվ նույնիսկ եկամտային հարկի աճող սանդղակի պարագայում: Այդ պատճառով քաղաքականություն մշակողները պետք է առաջնորդվեն հարկային սեպի ցուցանիշով և երաշխավորեն, որ անվանական աշխատավարձի աճին զուգընթաց ավելանա դրանում պարտադիր վճարների (եկամտային հարկ, կենսաթոշակային վճար, դրոշմանիշային վճար) տեսակարար կշիռը:
- ՀՀ տնտեսության բարձր ստվերայնությունը պայմանավորված է նաև հարկային վարչարարության բնագավառում առկա խնդիրներով: Հետազոտությունները ցույց են տալիս, որ ՀՀ-ում տնտեսավարող սուբյեկտները շարունակում են խուսափել

հարկերից նույնիսկ հաճախակի հարկային ստուգումների պայմաններում: Սա նշանակում է, որ հարկային մարմինների աշխատանքում առկա են կոռուպցիոն ռիսկեր, և հարկային տեսուչների որակավորումը բավարար չէ: Բացի այդ, տնտեսավարող սուբյեկտների ռիսկայնության գնահատման տեխնիկական համակարգը, ունենալով բավական առաջադեմ իրավական բազա, այդուհանդերձ, կարիք ունի որոշակի կատարելագործման:

Նշենք նաև, որ վերջին տարիներին, այն է՝ 2016 թվականի կեսերից մինչև այժմ, ՀՀ-ում նկատվել է ստվերի կրճատման տեմպերի դանդաղում: Իսկապես, 2016-ի երրորդ եռամսյակից մինչև 2019-ի երրորդ եռամսյակն ընկած ժամանակաշրջանում ստվերայնության մակարդակը նվազել է շուրջ 2 տոկոսային կետով այն դեպքում, երբ նախորդող երեք տարիների կտրվածքով (2013-ի երրորդ եռամսյակից մինչև 2016-ի երրորդ եռամսյակն ընկած ժամանակաշրջանում) նվազումը կազմել է շուրջ 9 տոկոսային կետ: Սա նշանակում է, որ անհրաժեշտ է վերանայել ՀՀ ստվերային տնտեսության ֆորմավացման ռազմավարությունը: Հարկային ճեղքվածքների հաղթահարման և հարկային ստուգումների որակի բարելավման նպատակով պետք է անցում կատարել հարկային վարչարարության արևմտյան մոդելին, որի ներքո ստվերային տնտեսության կրճատումը որպես կանոն ուղեկցվում է ֆորմալ ՀՆԱ-ի աճով: Բացի այդ, էական նշանակություն է ունենալու անցումը աշխատուժի պրոգրեսիվ հարկմանը, ինչպես նաև կանխիկ գործարքների սահմանափակումների ներմուծումը:

Այսպիսով, ստվերային տնտեսության հաղթահարումը և հարկատուների շրջանում օրինապահ վարքագծի ձևավորումը կախված են երեք գործոններից: Առաջին՝ արդյո՞ք հարկային կանոնները արդար են և արդյունավետ: Երկրորդ՝ արդյո՞ք հարկային կանոնները կենսագործվում են ամբողջությամբ: Երրորդ՝ արդյո՞ք ֆորմալ բիզնես միջավայրը բավականաչափ գրավիչ է տնտեսական գործունեության տվյալ տեսակների համար: Այս նախադրյալների ապահովումը կառավարությունից պահանջելու է հետևողական և թիրախավորված աշխատանք, որի պարագայում է միայն հնարավոր չեզոքացնել ստվերային տնտեսությունը, ավելացնել ՀՆԱ-ն և պետական եկամուտները, ինչպես նաև բարձրացնել բնակչության կենսամակարդակը:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: